AZG NEW PDF.qxd 24/06/2010 22:18 Page 1


# Ազգ

Azg

25 ՅՈՒՆԻՍ 2010 ՈՒՐԲԱԹ 117 (4497)

ISSN: 1829-1651


## Հանդիպում են բարի կամքի դեսպանները

Փարիզում մեկնարկում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպանների հանդիպումը: Դեսպանների խմբում ներառված է 40 մարդ՝ գիտության, մշակույթի, հասարակական կյանքի տարբեր ոլորտներից: Հանդիպման գլխավոր թեման լինելու է մշակույթների մերձեցման միջազգային տարին, որի անցկացումը «պատասխանն» է սոցիալական եւ ինտելեկտուալ ոլորտներում համաշխարհային ճգնաժամին, տարբեր հասարակություններում կոնֆլիկտների սրմանը: Ի դեպ, այս տարի ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշում է իր 65-ամյակը: Հավելենք նաեւ, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան է նաեւ Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը:

*Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ*

# Ժամանակն է դիմելու միջազգային դատարան


ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ


**Հուլիսի 2-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում տեղի կունենա համաժողով՝ «Մեծ եղեռնի-Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելից: Արդարության հաստատման սահմանագիծ» թեմայով, Համաշխարհային հայկական կոնգրեսի, ՀՀ սփյուռքի նախարարության եւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպմամբ: Համաժողովում կքննարկվի մինչեւ 2015 թ. համահայկական միասնական գործողությունների հայեցակարգային ծրագիր ունենալու հարցը, որը կուղղորդի համայն հայության ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, դրա հետեւանքների հաղթահարմանն ուղղված գործողություններում, ինչպես նաեւ՝ Ցեղասպանության ճանաչման եւ հետեւանքների հաղթահարման նպատակով միջազգային դատական ատյաններ դիմելու հնարավորությունը, այդ բոլորի իրագործումն ապահովելու նպատակով համապատասխան կոմիտե (խորհուրդ) եւ հիմնադրամ ստեղծելու, փորձագիտական ու մասնագիտական հանձնաժողովներ ձեւավորելու անհրաժեշտությունը: Համաժողովին կմասնակցի եւ ծրագրային ելույթով հանդես կգա նաեւ Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, որի՝ համաժողովին ընդառաջ ստորագրած հոդվածը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:**

Մեծ եղեռնը՝ օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանությունը մարդկության պատմության խորհրդանշական իրադարձություններից է, քանի որ ողբերգականորեն ազդեց հայ ժողովրդի ճակատագրի վրա: Ցեղասպանության չհաղթահարված հետեւանքները մինչեւ օրս խանգարում են Հայաստանի եւ հայ ժողովրդի բնականոն զարգացմանը քաղաքականության, տնտեսության, ժողովրդագրության, մշակույթի, բարոյականության, հոգեբանության եւ, իհարկե, ազգային անվտանգության բնագավառներում:

Անցած տարիներին հայ ժողովուրդը համախմբված կամք դրսեւորելով՝ հասել է աշխարհի շատ պետությունների կողմից Հայոց ցեղասպանության հանցագործության ճանաչմանը եւ Թուրքիայի դատապարտմանը:

Այդուհանդերձ ժամանակակից Թուրքիան շարունակում է Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության փաստը ժխտելու քաղաքականությունը: Անկարան Հայոց ցեղասպանության փաստի կապակցությամբ միջազգային հանրությանը ապատեղեկացնելու եւ պատմությունը խեղաթյուրելու ամեն տեսակ հնարավորություններ է գտնում:



Նման բարդ իրավիճակում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը 2008 թ. Թուրքիայի հետ երկխոսություն սկսեց դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ առանց նախապայմանի պետական սահմանները բացելու հարցի շուրջը:

Սակայն Թուրքիան այս անգամ եւս փորձեց գործընթացից քաղել միակողմանի շահաբաժիններ, Հայաստանին ներկայացնելով Ղարաբաղի խնդրի կարգավորման պայմաններ: Հայաստանի ղեկավարությունն ըստ արժանվույն մերժեց թելադրանքի բոլոր դրսեւորումները եւ ստիպված կասեցրեց հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը համաշխարհային ընկերակցությանը ցույց տվեցին, որ Հայաստանը եղել եւ մնում է խաղաղասեր պետություն, որը հանդես է գալիս բոլոր հարեւանների հետ տարածաշրջանային գործընկերության օգտին եւ ըստ այդմ պատրաստ է Թուրքիայի հետ հաստատել լիարժեք միջպետական հարաբերություններ, բայց առանց նախապայմանների:

Տես էջ 4

## Դատական հայց Գերմանիայի դեմ՝ ընդունելու Ցեղասպանությունն ու իր պատասխանատվությունը

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գերմանահայ փաստաբան Ստեփան Թաշչյանը Բեռլինի վարչական դատարան անհատական հայց է ներկայացրել՝ Գերմանիայի կառավարությունից պահանջելով 1915-16 թթ. հայ ժողովրդի ջարդերը ճանաչել որպես Ցեղասպանություն: «**Ազգի**» հետ հեռախոսազրույցում պրն Թաշչյանը տեղեկացրեց, որ վարչական դատարան ներկայացված հունիսի 21-ի նույն հայցով նաեւ պահանջ է ներկայացվել, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ընդունի իր պատասխանատվությունն այդ Ցեղասպանության համար: Պատասխանատվության հարցում հենց Գերմանիայի Դաշնային Հանրապետությանն է հասցեագրված հայցը, քանի որ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի համաձայն, գերմանական երկրորդ Ռայխի (կայզերական Գերմանիայի) իրավահաջորդը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն է:

Տես էջ 2

## Նոր համազեկուցողն է Լինդբլադը

**Ինչպես պարզ է դարձել երեկ ԵԽԽՎ-ի մոնիտորինգի հանձնաժողովի նիստում քվեարկության արդյունքով՝ Հայաստանի հարցերով ԵԽԽՎ նոր համազեկուցող է ընտրվել շվեդ Գորան Լինդբլադը: Հիշեցնենք, ինչպես նախօրոք տեղեկացրել էր «Ազգը», նախկին համազեկուցող Կոլոմբիեն «պաշտոնավարման ժամկետը լրանալու կապակցությամբ» դադարեցրել էր աշխատանքը: ԵԽԽՎ-ում Շվեդիայի պատվիրակության ղեկավար, Հայաստանի հարցով համազեկուցող ընտրված Լինդբլադը «հայտնի» է նրանով, որ այս տարվա փետրվարին շրջանառության մեջ էր դրել մի նախագիծ, որում «2008-ի մարտի մեկի իրադարձություններում բանակի ներգրավվածությունը որակվում է որպես պետական հեղաշրջման տարրեր պարունակող»: Հ. Ա.**

## Վաղվա «Ազգ. մշակույթ-հավելվածում»

«Անտիպ էջերում» - Լեռ Կամսարի «Կարմիր օրեր» շարքի էջերից. սիբիրական օրերի՝ հոգեբանորեն խտացված, ազդեցիկ պատկերներ:

«Գրական նամականին» ներկայացնում է Տիրան Չրաքյանի (Ինտրա) նամակագրության շարունակությունը:

«Նորից Կոստան Զարյանի մասին» - Գրիգոր Աճեմյանի հայացքը գրողի արձակի գեղագիտությանը:

Ուղեգրություն- Արծվի Բախչինյանի լիբանանյան տպավորություններից:

Գրական զուգահեռներ - հայ եւ հույն բանաստեղծներ Վահան Թեքեյանը եւ Կոնստանտին Կավաֆիսը Երվանդ Ազատյանի մտորումներում:

Արդի ժամանակներում կոմպոզիտորի դերի համատեքստում՝ Սոֆյա Գուբայդուլինայի արվեստը Սվետլանա Սարգսյանի մեկնաբանությամբ: **Մ. Բ.**

## Նախագահը Ղարաբաղում է

**Երեկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մեկնեց Ստեփանակերտ: Ինչպես փոխանցում է նախագահի մամլո գրասենյակը, նախագահն այցելել է զինվորական հոսպիտալ, որտեղ բուժվում են հունիսի 18-ին ադրբեջանական զինված խմբավորման սադրանքի հետեւանքով վիրավորված զինվորները: Սերժ Սարգսյանը հանդիպումներ է ունեցել նաեւ ԼՂՀ ղեկավարության հետ, մասնակցել է նոր զորամասի բացման արարողությանը:**

## Սեյրան Օհանյանը հանդիպել է Բակո Սահակյանին

**Արցախի նախագահ Բակո Սահակյանը հունիսի 24-ին ընդունել է Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին:**

**Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից հայտնում են, որ հանդիպմանը, որին մասնակցում էր նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանը, քննարկվել են բանակաշինությանը եւ տարածաշրջանի գործընթացներին վերաբերող հարցեր:**

## Դպրոցներում վաճառվում է ոչ պիտանի սնունդ

**Հայաստանի 231 դպրոցում եւ 146 մանկապարտեզում մոնիտորինգի արդյունքում հայտնաբերվել են սննդամթերքի անվտանգության պահանջների խախտումներ: Սննդի անվտանգության մոնիտորինգն անցկացրել են «Սպառողների իրավունքների պաշտպանություն» (ՍԻՊ) ՀԿ-ն եւ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչությունը: Մոնիտորինգն անցկացվել է Երեւանի եւ մարզերի 442 դպրոցների, մանկապարտեզների բուֆետներում եւ ճաշարաններում: Նշված տեսչության սննդի անվտանգության բաժնի պետ Արթուր Վարժապետյանը տեղեկացրեց, որ ճաշարաններում եւ բուֆետներում արձանագրվել է անհայտ ծագմամբ, առանց սերտիֆիկատի, ժամկետանց սննդամթերքի վաճառք, բացի այդ՝ սննդամթերքը պահվել է առանց սառնարանների: ՍԻՊ ՀԿ-ի նախագահ Աբգար Եղոյանն էլ համագործակցելու կոչ արեց երեխաների ծնողներին: «Սննդի անվտանգությունն ազգային անվտանգության եւ գենֆոնդի պահպանման հարց է», հավելեց Ա. Եղոյանը: Ի. Պ.**

ԱՐՄԵՆԱԿԱՆ - ՌԱԿ

## Հայտարարություն

**Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունն իր ցավակցությունն ու վշտակցությունն է հայտնում հունիսի 18-ի լույս 19-ի գիշերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանում՝ հայ-ադրբեջանական շփման գծում զոհված մեր զինվորների հարազատներին եւ ընտանիքներին: Կուսակցությունը առաջարկում է սահմանների պաշտպանության համար զոհված եւ վիրավոր զինվորներին ներկայացնել պետական պարգեւների եւ շքանշանների, իսկ նրանց ընտանիքներին տրամադրել նյութական ու բարոյական աջակցություն:**

**Կուսակցությունը միաժամանակ իր անհանգստությունն է արտահայտում տեղի ունեցածի վերաբերյալ, նշելով, որ թշնամու նենգ գործողության հետեւանքով հայկական կողմի մեծաքիվ զոհերի խնդիրը պետք է դառնա մեր ռազմական եւ իրավական կառույցների մանրակրկիտ ուսումնասիրության եւ հետաքննության առարկա, որի արդյունքները պետք է հրապարակվեն: Արմենական-ՌԱԿ-ը կարծում է, որ պետք է պատասխանատվության ենթարկվեն սահմանի այդ հատվածի պաշտպանության պատասխանատուները, որպեսզի հետագայում թշնամու նմանատիպ գործողությունները բացառվեն:**

**Արմենական-ՌԱԿ-ը նաեւ իր մտահոգությունն է հայտնում միջազգային կառույցների եւ հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարության կապակցությամբ: Այդ կառույցները փաստորեն հավասարության նշան դրեցին ագրեսորի եւ ագրեսիայի ենթարկվածի միջեւ: Այսպիսով պարզ է, որ օբյեկտիվ եւ անկողմնակալ միջնորդության մասին խոսք անգամ լինել չի կարող, հետեւաբար Հայաստանի Հանրապետությունը պետք է ղարաբաղյան հարցում գնա սեփական դիրքերի կոշտացման ճանապարհով:**

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

## Իրանն ուժեղացնում է երկրի հյուսիսային սահմանների վերահսկումը

Իրանի ոստիկանական ուժերի հրամանատար, գեներալ Էսմայիլ Ահմադ Մողադամը նախօրեին ներկայացրել է երկրի հյուսիսային՝ Արեւմտյան Ադրբեջան նահանգի սահմանապահ եւ ոստիկանական ծառայությունների նոր հրամանատարներին: Հրամանատարների փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Իրանը որոշել է ուժեղացնել հյուսիսային սահմանների (Ադրբեջանի հարեւանությամբ-Հ. Ա.) վերահսկողությունը: Այս նպատակով գեներալ Մողադամը նշել է, որ բոլոր սահմանային ուղեկալները կզինվեն նորագույն տեխնիկայով. «որպեսզի կանխվի թշնամու՝ հեռվից կառավարվող ռումբերի գործարկումը», ըստ «Իռնա» գործակալության՝ նշել է Մողադամը: Գեներալը, կոնկրետ խոսելով Արեւմտյան Ադրբեջանի մասին, նշել է. «Անվտանգության ապահովման առումով այս նահանգին պետք է առավելագույն ուշադրություն դարձնենք, քանի որ այս նահանգի շնորհիվ է հնարավոր է եղել չեզոքացնել ներքին եւ արտաքին թշնամիների սպառնալիքները»: Հասկանալի է, որ Իրանի ոստիկանության հրամանատարը հատկապես շեշտել է «ներքին թշնամիների» մասին: Ինչպես արդեն բազմիցս գրել է **«Ազգը»**, այս շրջանները վաղուց արդեն Ադրբեջանի նշանառության տակ են: Հիմնվելով Իրանի հյուսիսում ապրող թյուրքախոս ազգերի վրա, որոնք Իրանի 70 միլիոնանոց բնակչության 20-25 տոկոսն են կազմում, Ադրբեջանը՝ հրապարակավ, իսկ Թուրքիան՝ քողարկված, փորձում են իրականացնել «մեծ երազանքը»՝ Մեծ Թուրանը: Մեր թերթը մայիսի 21-ի համարում նաեւ հրապարակել էր քայլերի այն ցանկն ու հերթականությունը, որ նախատեսվում են «թուրքական աշխարհի» ստեղծմանը հասնելու համար:

Հ. Ա.

AZG NEW PDF.qxd 24/06/2010 22:12 Page 1



ԱԶԳ **Ընթացիկ**

# «Ֆրանս Տելեկոմի» ղեկավարությունը հիացած է «Օրանժ Արմենիայի» առաջընթացով

«Օրանժ Արմենիայի»՝ անցյալ տարվա նոյեմբերից մինչ այժմ գործունեության արդյունքները երեկ ամփոփեցին եւ ընկերության նոր առաջարկների մասին լրագրողներին պատմեցին Երեւանում գտնվող «Ֆրանս Տելեկոմ» խմբի փոխնախագահ **Օլաֆ Սուանեցին** եւ «Օրանժ Արմենիայի» գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Բրունո Դյութուան մասնավորապես նշեց, որ «Օրանժը» Հայաստանում իր բաժանորդներին առաջարկեց 3G ծածկույթը, ինչպես նաեւ բավականին մեծ նորարարությունների հեղինակ դարձավ: Նա ընդգծեց, որ ներկայումս ընկերությունն ունի 25 հազար շարժական գերարագ ինտերնետի բաժանորդներ, ինչը «մեծ հեղափոխություն էր ինտերնետի մատուցման ծառայություններում»:

Օլաֆ Սուանեցին նույնպես իր խոսքը սկսեց «Օրանժի» կողմից շարժական գերարագ ինտերնետի ներդրման մասին, ասելով, որ տոկոսային հարաբերությամբ ընկերության կաղի այս տեսակի բաժանորդները Հայաստանում ավելի շատ են, քան մյուս բոլոր երկրներում, որտեղ գործում է «Օրանժը»: Այնուհետեւ «Ֆրանս Տելեկոմի» փոխնախագահը ներկայացրեց այն երկու նոր ծառայությունները, որ ընկերությունը ներդնելու է Հայաստանում:

Առաջինը HD բարձր հստակության ձայնային ծառայությունն է, որը ներկայացվեց մամուլի ասուլիսի ժամանակ: Նման ծառայություն աշխարհում երկրորդը մատուցվելու է Հայաստանում: HD ձայնային ծառայությունները ասես վերացնում են զրուցակիցների միջեւ հեռավորությունը, ձայնը լսվում է շատ ավելի պարզ եւ մոտ, քան դա լինում է սովորական հեռախոսային խոսակցության ժամանակ: Եթե սովորական հեռախոսազանգն իրականացվում է 300-3400 Հց հաճախականային տիրույթում, ապա HD-ի դեպքում՝ ավելի մեծ՝ 50-7000 Հց հաճախականային տիրույթում:

Երկրորդ ծառայությունը, որը պատրաստվում է մատուցել «Օրանժ Արմենիան», դարձյալ շարժական գերարագ ինտերնետին է վերաբերում: HSPA տեխնոլոգիաների ներդրմամբ ընկերությունը կմատակարարի ավելի բարձրորակ ինտերնետ՝ ներկայիս 7,2 Մբ/վրկ-ի փոխարեն 14,4 Մբ/վրկ արագությամբ: Ներկայումս «Օրանժը» վերազինում է ցանցը, իսկ նոր արագությամբ շարժական գերարագ ինտերնետի մատակարարման մոդեմները շուկայում կհայտնվեն ամառվա ընթացքում:

Օլաֆ Սուանեցին շեշտեց, որ այլ երկրներում, որտեղ «Օրանժը» մատակարարում է շարժական գերարագ ինտերնետ, դրանից ստացվում է ընկերության եկամուտների 10-15 տոկոսը, իսկ Հայաստանում՝ 40 տոկոսը: Ամփոփելով իր խոսքը, «Ֆրանս Տելեկոմի» փոխնախագահն իր հիացմունքը հայտնեց «Օրանժ Արմենիայի» գործունեության եւ արդյունքների, որը հասել է ընկերության 340 հոգանոց աշխատակազմը Բրունո Դյութուայի ղեկավարությամբ: «Մենք հիացած ենք Հայաստանում «Օրանժ Արմենիայի» արձանագրած առաջընթացով: Սա ոչ միայն մեր ընկերության, այլեւ Հայաստանի առաջընթացն է», ասաց Օլաֆ Սուանեցին:

Այնուհետեւ «Օրանժի» ներկայացուցիչները պատասխանեցին լրագրողների հարցերին: Անդրադառնալով ընկերության հետագա փաղափականությանը նոր բաժանորդների ներգրավման վերաբերյալ, Օլաֆ Սուանեցին նշեց, որ իրենց քաղաքականությունը նույնն է լինելու, եւ շարունակելու են ձեռք բերել նոր բաժանորդներ, ու հուսով են, որ նրանց ներկայիս քանակը կկրկնապատկվի: «Յուրաքանչյուր հին բաժանորդ կարող է ստանալ այն բոլոր առաջարկները, ինչ կառաջարկվի նոր բաժանորդներին», ասաց նա:

«Օրանժ Արմենիայի» գործունեության առաջիկա հիմնական ուղղությունները են լինելու ցանցի տարածումը աշխարհագրականորեն եւ վերազինումը, որը կավարտվի ամառվա ընթացքում:




ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

# «Այդ դեպքում ինչո՞ւ է ադրբեջանցի դիվերսանտի դին հայտնաբերվել ԼՂՀ տարածքում»

## *«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպությունը դատապարտում է Չայլուի դիվերսիան*

Անդրադառնալով հունիսի 18-ի լույս 19-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության շփման գծում տեղի ունեցած միջադեպին՝ երեկ հայտարարություն է տարածել «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» (EuFoA) կազմակերպությունը: Նախ տեղեկացվում է, որ փաստի առիթով եղել են մի շարք հանդիպումներ պաշտոնատար անձանց, փորձագետների, տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ապա կազմակերպության գլխավոր քարտուղար **Մայքլ Քամբեքը** հանդես է եկել հայտարարությամբ. «Սա վտանգավոր եւ ռիսկային մանեւր է, որը նախաձեռնել է ադրբեջանական կողմը: Երեւում է՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը դժգոհ է եղել հունիսի 17-ին Սանկտ Պետերբուրգում կայացած խաղաղ բանակցությունների արդյունքներից եւ հրամայել է իր զորքերին գրավել փոքր գյուղն ու ցավոտ ազդակ տալ, որ ռազմատենչ հայտարարությունների դեպքում ինքը շատ լուրջ է տրամադրված»: Այնուհետեւ հայտարարությամբ տեղեկացվում է, որ հարձակման ենթարկված Չայլու գյուղը շրջապատված է ադրբեջանական դիրքերով, ապա նշվում է, որ գյուղի նկատմամբ եղած հարձակումը բռնության ակտ է, որը խախտում է մադրիդյան սկզբունքներում եւ Մայնդորֆյան հռչակագրում ամրագրված ուժի չկիրառման սկզբունքը: Ապացուցելով ադրբեջանական այն պնդումների անհիմնությունը, թե իբր գործողությունները սկսել եւ իրականացրել է ղարաբաղյան կողմը՝ կազմակերպությունը մատնանշում է մի շարք կարեւոր արձանագրումներ. «Նախ նկատենք, որ Ադրբեջանն այս տեղանքում ամրացրել է իր լավագույն պաշտպանական դիրքերը, հետեւաբար անիմաստ կլիներ ղարաբաղյան հարձակումն այդ դիրքերին, բացի սա՝ այդ պարագայում ինչո՞ւ ադրբեջանցի դիվերսանտի դին հայտնաբերվել է ԼՂՀ տարածքում», ընդգծված է կազմակերպության հայտարարության մեջ:

Վերջում EuFoA մամլո ծառայությունը ներկայացնում է կազմակերպության ղեկավար Մայքլ Քամբեքի մտահոգությունը. «ԵՄ-ը չի կարող եւ չպետք է միջամտի ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին: Բայց քանի որ շփման գծում իրավիճակը մնում է լարված, մենք անպայման պետք է մտորենք այնպիսի գործիքների շուրջը, որոնք կկանխեն երկրորդ «վրացական պատերազմը»: Մենք նաեւ հրադադարի ռեժիմն ամրապնդելու կարիք ունենք՝ երկու կողմից էլ դիպուկահարներին հեռացնելու եւ դիտորդներ տեղակայելու միջոցով: Սպասելու ժամանակ չկա»:

Հ. Ա.

# Շփման գծի դիտարկումներ, որ գրեթե միշտ ուշացած են

Նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը երեկ դիտարկում է անցկացրել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Թալիշ բնակավայրից դեպի արեւելք, որտեղ հունիսի 18-19-ի գիշերն ադրբեջանական կողմը կոպտորեն խախտել էր հրադադարի ռեժիմը:

ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայության հաստատմամբ, ղարաբաղյան պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնականներ Անտալ Հերդիչը (Հունգարիա) եւ Ժասլան Նուրտազինը (Ղազախստան):

Տվյալ պաշտպանական հատվածի համար պատասխանատու՝ ԼՂՀ պաշտպանության բանակի զինծառայողները ԵԱՀԿ առաքելության անդամներին ներկայացրել են ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերի վրա ադրբեջանական դիվերսիոն ջոկատի նենգ հարձակման մանրամասները, ինչի հետեւանքով երկու կողմերն էլ կորուստներ են կրել:

Դիտարկման խումբը ադրբեջանական կողմից գլխավորում էր ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներրկայացուցիչ դեսպան Անջեյ Կասպրշիկը: Դիտարկման առաքելությանը ղարաբաղյան կողմից ուղեկցել են ԼՂՀ արտաքին գործերի նախարարության եւ ԼՂՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները:

Դիտարկման ընթացքում հրադադարի խախտման դեպքեր չեն արձանագրվել, ինչպես գրեթե միշտ:

Ա. Հ.

# Երկու ամսում Երեւանում գրանցվել է ջրապօրինության 1418 դեպք

**Եթե ապրիլ ամսին Երեւանի քաղաքացիները օրական 22 ժամ ապահովված էին ջրամատակարարմամբ, ապա մայիս-հունիս ամիսներին ջրամատակարարման տեւողությունը կտրուկ նվազեց: «Երեւան ջուր» ընկերության աշխատակիցները դա պայմանավորում են մի շարք անօրինականություններով ու ապօրինություններով եւ դրանք կանխարգելելու նպատակով մայիսի 1-ից ստեղծվել է ջրի հաշվեկշռի համակարգման եւ վերահսկման տնօրենություն:**

**Երեկ ընկերության ներկայացուցիչները ներկայացրին շուրջ երկու ամիս կատարած աշխատանքների արդյունքները: Համաձայն ներկայացրած տվյալների՝ Երեւանում ջրապօրինությունը կազմել է 85 տոկոս: Արձանագրվել է 1418 դեպք, որից 666-ը ապօրինի ջրամիացում:**

**Խախտումներում գերակշռում է ջրաչափերում մագնիսի կամ ասեղի տեղադրումը: Կազմակերպության արտաքին կապերի տնօրեն Ռոբերտ Նազարյանի ներկայացմամբ՝ հայտնաբերվել են ապօրինի ջրագծեր ոչ միայն սեփական տներում, այլեւ բազմաբնակարան շենքերում՝ ինչից խախտվում է նաեւ ջեռուցման համակարգը:**

**Ստուգումներով պարզվել է, որ Հաղթանակ զբոսայգու 15 սրճարանից 10 ունի ապօրինի ջրագիծ:**



**Ջրի հաշվեկշռի համակարգման եւ վերահսկման տնօրենության տնօրեն Միքայել Դավթյանի ներկայացմամբ՝ քանակի առումով ավելի շատ խախտումներ կատարում են բնակիչները, ծավալի առումով՝ կազմակերպությունները: Յուրաքանչյուր խախտման համար սահմանված է տույժ՝ 4000-ից մինչեւ 200-300.000 դրամ: Տուգանք սահմանելիս հաշվի է առնվում նաեւ ջրի օգտագործման ծավալը:**

**«Այս ընթացքում 14 մլն դրամ գումարի չափով խախտում է կասարվել: Մեր նպատակը տուգանելը չէ: Այս միջոցառումներն իրականացվում են, որպեսզի ապօրինի ջուր օգտագործողները գան դաշտ, հաշվառվեն, եւ մենք իմանանք, թե ջուրն ուր է գնում եւ ինչ նպատակների է ծառայում», ասաց Միքայել Դավթյանը:**

Հ. Հ.

# Դատական հայց Գերմանիայի դեմ՝ ընդունելու Ցեղասպանությունն ու իր պատասխանատվությունը

*1-ին էջից*

Ըստ Թաշչյանի, հայցը պատրաստ է եղել ներկայացվելու դատարան արդեն այս տարվա ապրիլի 24-ին, սակայն տարբեր պատճառներով դա չի արվել՝ մնալով ներկայացման այն օրը, երբ Հայաստանի նախագահը այցելությամբ գտնվում էր Գերմանիայում:

Ամեն դեպքում, արդեն իսկ ներկայացված հայցը, փաստաբանի խոսքերով, դատական ընթացակարգերի համաձայն, կուղարկվի հակառակ կողմին՝ պաշտպանություն նախապատրաստելու համար, որից հետո միայն հայցվորին կտեղեկացնեն իր հայցի արձագանքի մասին: Դրանից հետո, նույն ընթացակարգերի համաձայն, դատարանը հնարավորություն կտա կողմերին ներկայացնելու իրենց ելույթները՝ փաստարկներով ու մեկնաբանություններով:

Դեռեւս 2007 թ. փաստաբանական գրասենյակ ղեկավարող Թաշչյանը գերմանական խորհրդարանի Կովկասի գործերով վարչությանը ներկայացրել է Հայոց ցեղասպանության իրագործմանը գերմանացի զինվորների անմիջական մասնակցության փաստեր: Թաշչյանի վկայությամբ, ինքը նույն փաստերը ներկայացրել է նաեւ Հայաստանի արտգործնախարարությանը:

Ներկայումս Գերմանիայի կառավարությունը նախընտրում է հակադարձել Հայոց ցեղասպանությանն առնչվող բոլոր հարցերն այն ձեւակերպմամբ, թե դա պատմաբանների գործն է: Ի դեպ, հայ-թուրքական մերձեցման գործընթացի սկզբում էլ Գերմանիան ընդհանրական արձագանքեց, թե 1915-16թթ. կոտորածներին վերաբերող հարցերը հայ-թուրքական խնդիրներ են: Մինչդեռ, ըստ փաստաբան Թաշչյանի, վիճարկելի չէ, որ «Հայոց ցեղասպանությունը չէր լինի, եթե գերմանական Ռայխն իր համաձայնությունը չտար»:

Ստեփան Թաշչյանի խոսքերով, դատական այս հայցն առաջին քայլն է, որին կարող է հետեւել արդեն Հայաստանին Գերմանիայի կողմից փոխհատուցում տրամադրելու պահանջը, որը հնչեցնելու համար թերեւս հարկ կլինի սպասել առնվազն կես տարի, մինչ Բեռլինի վարչական դատարանը կսկսի հիմնական գործընթացը՝ լսելու հայցի կողմերին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 24/06/2010 21:51 Page 1



## Անցուդարձ

# Մեր մեջ աղմկող օտարամոլությունը

### *Կամ՝ օտարալեզու դպրոցների օրինագիծը քվեարկությամբ ճանապարհի ընկավ*

Երթուղայինով գնում ենք Ազգային ժողովի երեկվա նիստին, ուր պետք է քվեարկվի օտարալեզու դպրոցներ նախատեսող օրենսդրական փաթեթը: Մի կին հեռախոսով աշխատանքային խնդիրներ է բարձրաձայն քննարկում. «Մարատովնա ջան, Արտաշեսովնան ջղայնանում ա, ասում ա՝ պարտավորությունները չենք հասցնում կատարել, գրագրությունն անող չկա…», եւ այս ոճով շարունակում է: Զարմանալի զուգադիպություն է, քվեարկությունից մի 20 րոպե առաջ կենցաղային մակարդակով հերթական անգամ ապացուցվում է մեր օտարասիրությունը, քանի որ ռուսների իշխանությունն արդեն տասնամյակներ չկա եւ ոչ ոք մեզ չի ստիպում իրար հարգալից դիմել ռուսավարի, բայց մեր միջի օտարասերն աղմկում ու չարություններ է անում ու երեւի այդպես է արել նման՝ շատերի կարծիքով հակասահմանադրական փաթեթ նախաձեռնելիս: Մամիկոնիչ, Գառնիկիչ, Գրիգորիչ, Արգամիչ՝ դիմում ենք, չէ՞: «Կոմենթ գրեցի այսինչ թեմայով», ասում ենք, չէ՞: «Օ քեյ, խառաշո», հավանություն ենք տալիս, չէ՞: «Ռիգար», «Քուինբուրգեր» հայերեն տառերով օտարամտությունը մեր ռեստորանների ճակատին դաջում ենք, չէ՞: Հեռուստացույցի օտարաբառ խոսվածքը, շեշտադրումներն ու առոգանությունը հանդուրժում ենք, չէ՞: Ահա մանրուք թվացող այսպիսի բաղադրիչներից ձեւավորվում է օտար մտածողության հորդ գետը. ինչ կա որ, մի քանի միջազգային դպրոց որ Հայաստանում գործի, ո՞ւմ է խանգարելու, մեր երեխաներից-թոռներից էլ կկարողանանք այդ դպրոցներն ուղարկել՝ մեր միջի օտարամոլին սնում ենք մենք: Բայց խանգարելո՛ւ է: Խանգարելո՛ւ է անկախ պետությանը, որի սահմանադրության մեջ գրված է՝ հանրակրթության լեզուն հայերենն է: Այնպես որ՝ օրը գա, բարին հետը, գուցե գտնվի 27 պատգամավոր, որ դիմի Սահմանադրական դատարան՝ այս փաթեթը հակասահմանադրական ճանաչելու պահանջով: Իսկ երեկ ընդամենը օտարալեզու դպրոցներ նախատեսող օրինագիծը շատ հանգիստ առաջին ընթերցում անցավ՝ 71 «կողմ», 13 «դեմ», 1 «ձեռնպահ» ձայներով: Ընդ որում՝ քվեարկությունից ուշացողներ եղան այն մարդկանցից, ովքեր դեմ էին քվեարկելու, օրինակ՝ Ստեփան Սաֆարյանը «Ժառանգությունից», որը հղում արեց, թե Ազգային ժողովի նախագահը երեկ հայտարարել էր, որ քվեարկությունը կկայանա այսօր երեկոյան, մինչդեռ փաթեթը քվեարկության դրվեց առավոտյան: Իսկ փաթեթին «դեմ» են քվեարկել Վիկտոր Դալլաքյանը, Տիգրան Թորոսյանը, Արտաշես Շահբազյանը, Ռուզան Առաքելյանը, Արայիկ Գրիգորյանը, Հրայր Կարապետյանը, Լիլիթ Գալստյանը, Արծվիկ Մինասյանը, Արա Նռանյանը, Գագիկ Գեւորգյանը, Անահիտ Բախշյանը, Արմեն Մարտիրոսյանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# «Օտարալեզու դպրոցներ Հայաստանում չեն գործելու»



Երբ ԱԺ-ում ավարտվեց քվեարկությունը՝ ընդունելով «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության մասին» օրենքներում փոփոխությունները, կառավարության նիստերի դահլիճի մոտ հավաքված ցուցարարները որպես բողոք սուլում էին ու բղավում «դավաճաններ», «71 ստրուկ», «71 դավաճան» եւ այլն:

Խորհրդարանը հավանություն տվեց օրինագծին: Երկրորդ ընթերցումը կկայանա աշնանը: «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» նախաձեռնության անդամ Արմեն Հովհաննիսյանն «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց, որ օրենքի սահմաններում շարունակելու են պայքարել, որպեսզի երկրորդ ընթերցմամբ օրինագիծը չընդունվի:

«Երաշխավորում եմ, որ նմանատիպ կեղծ հաղթանակներով նրանք օրինագիծը չեն անցկացնի: Օտարալեզու դպրոցներ Հայաստանում չեն գործելու: Հայ մանուկները սովորելու են հայկական դպրոցում: Չափավորությունը բերեց նրան, որ այսօր նրանք մեզ այդ օրը հասցրեցին: Բոլոր ճակատներով հարձակվելու ենք հայրենիքի ամրությունն ու հայկականությունը պահպանելու համար: Սա քաղաքացիական կռիվ է հանուն մեր արժանապատվության, եւ որեւէ զիջում բացառվում է», ասաց Ա. Հովհաննիսյանը:

Նրա տեղեկացմամբ՝ նախաձեռնող խմբի անդամները հանդիպել են տարբեր խմբակցությունների ղեկավարների հետ:

«ԲՀԿ-ից հանդիպել ենք Նաիրա Զոհրաբյանին եւ Արամ Սաֆարյանին: Ասացին, որ համաձայն են, եթե օտարալեզու ուսուցում անցկացվի միայն ավագ դպրոցներում, եւ այս տարբերակով օրինագծին դեմ են քվեարկելու: ՀՀԿ-ից հանդիպել ենք Գալուստ Սահակյանին, որը հավաստիացրեց, որ դեմ է քվեարկելու: ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն էլ ասաց, որ որպես հանրապետական եւ Հանրապետական կուսակցության նախագահի տեղակալ դեմ է, որ Հայաստանում հայ մանուկը գնա ոչ հայկական դպրոց», ասաց նա՝ հավելելով, որ աչքի են անցկացնելու կողմ քվեարկած 71 պատգամավորների անունները եւ անհրաժեշտության դեպքում կներկայացնեն նախաձեռնության անդամների եւ պատգամավորների միջեւ կայացած զրույցի մանրամասներ:

Նախատեսվում է Հայաստանում բացել 11 օտարալեզու դպրոց. որոնցից երկուսը Դիլիջանում եւ Ջերմուկում մասնավոր հիմունքով, իսկ մնացյալ 9՝ միջպետական համաձայնագրերի միջոցով:

Հ. Հ.

*Հ. Գ. Հունիսի 24-ը Հայ առաքելական եկեղեցու օրացույցով Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի հիշատակման օրն է՝ Սրբոց Թարգմանչացն մերոց: Հայաստանը միակ երկիրն է, որն ունի Թարգմանիչների տոն: Եվ դա պատահական չէ: Թարգմանիչների շնորհիվ հայ ազգն ունեցավ իր հայաբարբառ Աստվածաշունչը, կերտեց իր ինքնությունն ու իր դերը հաստատեց համաշխարհային մշակույթում: Եկեղեցիների պատերին հայտնվեցին հայկական արձանագրություններ: Հայ մտածողությամբ հայ ազգն ունեցավ յուրահատուկ ճարտարապետություն, մանրանկարչություն, գորգագործություն ու բժշկագիտություն:*

# Որեւէ օտար լեզվի իմացություն պետք է կառուցել հայերենի ամուր հիմքի վրա

«Օտարալեզու դպրոցների բացումը պահանջված է դրսից: Ինտեգրում կոչվածը պարունակում է շատ լավ տարրեր, բայց դրանք պետք է խելացիորեն օգտագործել եւ չվնասել ազգային հենքին», երեկ «Հենարան» ակումբում ասաց բանաստեղծ, թարգմանիչ **Հովհաննես Սարոյանը**, ապա ընդգծեց. «Ես բացասական կարծիք ունեմ օտարալեզու դպրոցների բացման վերաբերյալ»:

Բանախոսի կարծիքով՝ օտար լեզուների խորացված ուսուցում հնարավոր է նաեւ ներկայիս հանրակրթական դպրոցներում, դրա համար ամենեւին էլ պարտադիր չէ բացել օտարալեզու դպրոցներ: Հարկավոր է բարձրացնել պետական հանրակրթական դպրոցների մակարդակը: «Ցավոք, մեր բարձրագույն կրթությունն էլ այն մակարդակի վրա չէ, որ բանասերը խորացված սովորի 2 օտար լեզու: Ես բանասեր եմ եւ ափսոսում եմ, որ գիտեմ միայն հայերեն ու ռուսերեն: Կուզենայի իմանալ նաեւ թուրքերեն»: Թշնամու լեզվին տիրապետելը ռազմավարական նշանակություն ունի, բայց որեւէ լեզվի իմացություն պետք է կառուցել հայոց լեզվի ամուր հիմքի վրա:

Ինչ վերաբերում է մայրենիի մաքրությանը, Հ. Սարոյանը կրկնեց այն, ինչ ասվել է բազմիցս. «Հայոց լեզուն աղավաղվում է, լեզվի մաքրության խնդիրը հրատապ է»: Մայրենին մաքուր պահելը հարկավոր է սկսել նախ ընտանիքում, իսկ դպրոցը միակ օղակը չէ, որին պետք է ուղղել քննադատության բոլոր սլաքները:

**«Ազգի»** հարցին՝ ընտանիքում կամ այլուր ինչպե՞ս է հնարավոր զերծ պահել հայերենն աղավաղումներից, բանախոսը պատասխանեց. «Անհրաժեշտ է բարձրացնել հասարակական գիտակցությունը եւ գրագետ դարձնել հայոց լեզուն ամենօրյա լրատվության մեջ»:

Ի. Պ.

## ՎՐԱՍՏԱՆ

# Թարգմանչաց տոնը Թբիլիսիում

Թբիլիսիում երեկ հայ համայնքն ու համայնքի վրացի հյուրերը միասին նշել են Թարգմանչաց տոնը: Ինչպես «**Ազգի**» հետ հեռախոսազրույցում տեղեկացրեց **Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը**, նախ առաջնորդանիստ Սբ Գեւորգ եկեղեցում մատուցվել է Սուրբ պատարագ, ապա Թբիլիսի մշակութային եւ թարգմանական արվեստի ներկայացուցիչները համայնքի անդամների հետ բարձրացել են հայ մեծերի Խոջիվանքի պանթեոն:

Պանթեոնում կատարվել է հոգեհանգիստ այդտեղ հավերժացած հայ մեծանուն գործիչների հոգիների համար: Այնուհետեւ «Կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ **Անահիտ Բոստանջյանը** ներկայացրել է հայ եւ վրացի գրողների ստեղծագործությունների իր վերջին թարգմանությունները՝ հայերենից վրացերեն եւ հակառակը: Սբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու երգչախումբը պանթեոնում մի քանի գեղեցիկ կատարում է ներկայացրել մոտ 100 հավաքվածներին, որոնց թվում տոնի արարողությանը մասնակցել են վրացի հյուրեր, Թբիլիսիի քաղաքապետարանի ներկայացուցիչներ:

Ի դեպ, այսուհետեւ Թբիլիսի այցելողներից նրանք, ովքեր կբարձրանան պանթեոն, կվայելեն մաքրությունը, որ ապահովել են Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի երիտասարդները՝ Վրաստանում Հայաստանի դեսպանատան աջակցությամբ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ցանկությա՞մբ, թե՞ հարկադրաբար

### *Ախալցխայի Ս. Խաչ եկեղեցու առումով «շփոթմունք» առաջացրած Տեր Մանուկին տանում են Թբիլիսի*

«Սամցխե-Ջավախք տարածաշրջանի Ախալցխա քաղաքի Հայ առաքելական եկեղեցու հավատավորներս խիստ մտահոգված ենք Տ. Մանուկ քահանա Ջեյնալյանին Թիֆլիս տեղափոխելու Սրբազանի որոշման կապակցությամբ», այսպիսի բաց նամակ են հղել Ամենայն հայոց կաթողիկոսին մի խումբ ախալցխացիներ:

Նրանց համոզմամբ, Տեր Մանուկի տեղափոխությունը ուղղակի կապ ունի վերջին շրջանում Ախալցխայի Սբ Երեւման (Սբ Խաչ) եկեղեցու շուրջը տեղի ունեցած հայտնի դեպքերի հետ, որոնց անդրադարձել է նաեւ «**Ազգը**», ներկայացնելով առաջին հայտարարությունը հենց Տեր Մանուկի խոսքերով, թե հռոմեական կաթոլիկ եկեղեցին քանդում է հայկական կաթոլիկ եկեղեցին, կոտրում խաչքարերը: Հետագայում մեր թերթը ներկայացրել է նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի մոտեցումը, թե տվյալ դեպքում շինարարները միայն մաքրել էին եկեղեցին:

Ինչեւէ, ըստ ախալցխացիների, Մանուկ քահանան այն եզակի հայ հոգեւորականներից էր, որ «հանուն հայկական հուշարձանի պահպանման չկարողացավ չարձագանքել հայ կաթողիկե եկեղեցու շուրջը տեղի ունեցող գործընթացներին»: «Այն օրվանից, ինչ Ձեր բարձր տնօրինությամբ Տ. Մանուկ Ջեյնալյանը նշանակվեց Ախալցխայի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քահանա, մեր ժողովրդի մոտեցումը եկեղեցու հանդեպ կտրուկ փոխվեց», ներկայացնում են Ախալցխայի հայ բնակիչները:

Ներկայումս, ըստ նամակի, Ախալցխա քաղաքում եկեղեցի հաճախողների թիվը մի քանի անգամ ավելի շատ է, քան Սամցխե-Ջավախքի որեւէ քաղաքում կամ գյուղում: «Երեք տարվա ընթացքում Տեր Մանուկ քահանային հաջողվեց փոխել ժողովրդի հնացած մոտեցումը եկեղեցու նկատմամբ, որ առաջացել էր սովետական անաստվածության տարիներին: Ժողովրդի շրջվելը դեպի մեր հայկական մայր եկեղեցին չի կարող ուրախություն եւ ոգեւորություն չառաջացնել Սամցխե-Ջավախքի նման մեկուսացման մեջ հայտնված տարածաշրջանում, երբ ամենուր արդեն կամաց-կամաց հայկականի ծարավ ու կարիք է զգացվում»:

Վեհափառին հասցեագրված նամակում Ախալցխայի բնակիչները նշում են, որ Տեր Մանուկի նախաձեռնությամբ 2008թ. ապրիլից կազմակերպվեց քաղաքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պարսպի շինարարությունը: 2009թ. եկեղեցին գրեթե ամբողջությամբ վերանորոգվեց: «Այս ամենի հետ մեկտեղ անուշադրության չմատնվեց նաեւ քաղաքի Սբ Նշան եկեղեցին (Վրաստանում «վիճահարույց» ներկայացվող 6 հայկական եկեղեցիներից մեկը - Ա.Հ.), որը չնայած ախալցխահայության պահանջներին, մինչ օրս չի վերադարձվել Հայ առաքելական եկեղեցուն», ասվում է նամակում, վկայությամբ, որ Ախալցխայի ժողովրդի եւ Տ. Մանուկի միջեւ հաստատվել են բավական ջերմ փոխհարաբերություններ:

«Ուշացումով, սակայն մեր խորին շնորհակալությունն ենք ուզում հայտնել Ձեզ, երեք տարի առաջ Տեր Մանուկին Ախալցխա գործուղելու համար, եւ խնդրում օգնել մեզ՝ Տեր Մանուկ քահանային Ախալցխայից Թիֆլիս չտեղափոխելու հարցում», Ամենայն հայոց կաթողիկոսին են դիմում Ախալցխայի հայ բնակիչները:

«**Ազգի**» տեղեկություններով, Տեր Մանուկ քահանան չի ցանկանում հեռանալ Ախալցխայից: Սակայն «**Ազգի**» հետ զրույցում Վիրահայոց թեմի առաջնորդ **Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն** ասաց, որ Տեր Մանուկի տեղափոխումը Թբիլիսի հենց քահանայի դիմումի համաձայն է, որին ընդառաջ էլ գնացել է Վիրահայոց թեմը: Ընդ որում, ըստ սրբազանի, այդ տեղափոխությունը սովորական ծրագրված փոփոխություն է, որպիսին էլի սպասվում է Վիրահայոց թեմում: Իսկ Ախալցխայում հոգեւոր ծառայությունը կշարունակի այժմ էլ այդ քաղաքում ծառայող Տեր Տիգրան քահանան:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ավստրիայի ԱԳ նախարարի տարածաշրջանային վերջին հանգրվանը Երեւանն է

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով այսօր Հայաստան կժամանի Ավստրիայի եվրոպական ու միջազգային հարցերի դաշնային նախարար Միխայել Շպինդելեգերի գլխավորած պատվիրակությունը: Ըստ ԱԳՆ-ի հաղորդագրության, այցի ընթացքում նախատեսված է Ավստրիայի եվրոպական ու միջազգային հարցերի դաշնային նախարարի հանդիպումը Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Այցի շրջանակներում նախարար Շպինդելեգերը ծաղկեպսակ կդնի Ծիծեռնակաբերդի զոհերի հուշահամալիրում:

Ավստրիայի եվրոպական ու միջազգային հարցերի դաշնային նախարարը հունիսի 23-ին արդեն եղել է Ադրբեջանում, երեկ այցելել է նաեւ Վրաստան:

Ա. Հ.

AZG NEW PDF.qxd 24/06/2010 21:52 Page 1



*Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ*

# Ժամանակն է դիմելու միջազգային դատարան

*1-ին էջից*

Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն շարունակել է իր արտաքին քաղաքական օրակարգում պահել համաշխարհային ընկերակցության կողմից օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստի ճանաչման ու դատապարտման գործընթացը: Շվեդիայի խորհրդարանի եւ ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի վերջերս ընդունած բանաձեւերը ակնբախորեն վկայում են Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման եւ արդարության վերականգնման նկատմամբ չթուլացող հետաքրքրության մասին:

Եվ քանի որ մենք թեւակոխում ենք պատասխանատու ժամանակաշրջան՝ 5 տարի հետո նշելու ենք Հայոց ցեղասպանության 100-ամյակը, կարծում եմ, խոսք հրատապ է առաջարկել Հայաստանի եւ Սփյուռքի համատեղ գործունեության նոր հայեցակարգ օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցի կապակցությամբ:

Մեր հայեցակարգի էությունն այն է, որ միջազգային հարաբերություններում Հայաստանի քաղաքականության գլխավոր սուբյեկտը ժամանակակից Հայաստանի Հանրապետությունն է, նրա ժողովուրդը եւ իշխանության մարմինները: Այլ կերպ ասած, մենք պետություն ունեցող ազգ ենք եւ պարտավոր ենք օգտվել միջազգային սուբյեկտի մեր կարգավիճակից: Դրա հետ մեկտեղ, համազգային խնդրի առթիվ Հայաստանի դիրքավորման որոշումը կարող է կայանալ Սփյուռքի ներկայացուցչական մարմինների եւ լիազոր ներկայացուցիչների եռանդուն մասնակցությամբ:

Արդի Սփյուռքում պահանջների փաթեթը որոշելիս ներկայացված են տարբեր մոտեցումներ: Եվ դրանք հնչում են հայկական սփյուռքի առնվազն չորս աշխարհագրական եւ քաղաքական կենտրոններից (ներառելով Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Լիբանանը): Սակայն մեզ միավորում է միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա Ցեղասպանության հետեւանքները հաղթահարելու, ցեղասպանության զոհերի իրավունքները վերականգնելու ցանկությունը, այդ թվում՝ պատմական հայրենիքի, նյութական եւ բարոյական փոխհատուցման նրանց իրավունքի իրացումը:

Նման դեպքերում միջազգային պրակտիկան ենթադրում է գործունեության երկու՝ քաղաքական եւ դատական ուղղությունների միավորում:

Եթե քաղաքական գործունեության մեջ մենք ունենք որոշակի արդյունքներ, ապա Միջազգային դատարանին դիմելը պահանջում է առավել քրտնաջան աշխատանք:

Դատարանին գիտականորեն հիմնավորված դիմելուն մանրակրկիտ նախապատրաստվելու մի շատ կարեւոր մասը կատարված է Ռուսաստանի հայերի միության Միջազգային իրավունքի եւ քաղաքագիտության հայկական ինստիտուտի կողմից: Նախ եւ առաջ, հրատարակված է «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества» եռահատորյակը, որի կազմողը եւ պատասխանատու խմբագիրը ականավոր գիտնական, պրոֆ. Յու. Գ. Բարսեղովն է: Երկրորդ, մեր ինստիտուտի փորձագիտական խումբը միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն անցկացրել է Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության իրացման հնարավորության գիտական վերլուծության եւ մշակել դատական արարողակարգի կամ իրավարարության կոնկրետ հանձնարարականներ:

Միեւնույն ժամանակ մենք գտնում ենք, որ գիտական պատմագրության եւ միջազգային իրավունքի տեսակետից Միջազգային դատարանին ուղղված լիարժեք դիմում նախապատրաստելու համար անհրաժեշտ է համազգային հնարավորությունների համակարգում:

Մեր դիրքորոշումն ուժեղանում է նաեւ այն փաստով, որ վերջերս Երեւանում Հայաստանի արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանի հետ հանդիպման ժամանակ Հաագայի միջազգային դատարանի դատախազ Լուիս Մորենո-Օկամպոն հայտարարեց, որ իր տրիբունալը իրավասու է դատական կարգով քննության առնելու Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:

Ելնելով վերոշարադրյալից, Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) նպատակահարմար է գտնում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին առաջարկել ստեղծելու կոմիտե (խորհուրդ), որը առաջին հերթին կմշակի Սփյուռքի եւ Հայաստանի ներկայացուցչական մարմինների հետ համատեղ գործունեության նոր մեխանիզմ Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության անունից Միջազգային դատարանին ուղղված դիմումի նախապատրաստմանը վերաբերող հարցերի համալիրի առթիվ:

Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունը պետք է դառնա միջազգային-իրավական, տեղեկատվական-քարոզչական, վերլուծական, գիտական, կրթական, լուսավորչական, լոբբիստական գործունեությունը:

Վերոհիշյալ կոմիտեի արդյունավետ ու մշտական գործունեության համար առաջարկվում է Հայաստանի նախագահի ղեկավարությամբ ստեղծել հատուկ հիմնադրամ, որը կկուտակի աշխարհի հայության եւ Հայաստանի բարեկամների ֆինանսական եւ այլ նյութական միջոցները, ստացված միջոցները կհատկացնի աշխատանքի կազմակերպմանը, հաշվի առնելով գործունեության նախանշված ուղղությունները եւ վերջնական նպատակի ապահովումը:

Իր գործունեության ուղղություններին համապատասխան կոմիտեն պետք է մի շարք հանձնաժողովներ կազմի համակարգային, համալիր եւ կենտրոնացված աշխատանքի կազմակերպման համար: Հաշվի առնելով Թուրքիային Հայաստանի ներկայացրած քաղաքական պահանջների սահմանումը, հարկ կլինի դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ անցկացնել միջազգային-իրավական փորձաքննություն եւ տալ իրավաբանական հանձնաժողովի գնահատականը: Նախանշված դիրքորոշման շրջանակներում կանոնավորապես իրականացնել միջազգային տեղեկատվական-քարոզչական, վերլուծական, գիտական, կրթական եւ լուսավորչական գործունեություն: Նկատի ունենալով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, անհրաժեշտ է կազմակերպել համակարգված ցանցային գործունեություն տվյալ հարցի վերաբերյալ:

Ավելի ու ավելի մեծ թվով օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը մնում է կարեւորագույն քաղաքական խնդիր, քանի որ համապատասխանում է միջազգային իրավունքի, բարոյականության, ժողովրդավարության եւ արդարության նորմերին, ինչպես նաեւ նպաստում է Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության ամրապնդմանը եւ Թուրքիային նախազգուշացնում է հեռու մնալ Հայաստանի դեմ նոր արկածախնդրության դիմելու գայթակղությունից: Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած պետությունների եւ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ցանկը պետք է այսուհետեւ էլ համալրվի:

Սակայն Ցեղասպանության հանցագործության ճանաչումը եւ դրա համար Թուրքիայի դատապարտումը հազիվ թե բավարար լինեն մարդկության դեմ ուղղված այդ հանցագործության հետեւանքների հաղթահարման համար: Համաձայնենք, որ եթե գրեթե 50 տարի ազգային-քաղաքական նկատառումներով մեթոդաբար սպանում են մի ամբողջ ժողովրդի եւ հարյուր տարի անց ժողովրդի մնացյալ մասից լոկ ներողություն են խնդրում, դա հազիվ թե նորմալ համարվի ինչպես բարոյականության, այնպես էլ միջազգային իրավունքի եւ քաղաքականության տեսակետից:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը մնում է Հայաստանի համախմբված (պետական եւ սփյուռքյան) արտաքին քաղաքականության ռազմավարական խնդիրներից մեկը, ուղղակիորեն առնչվում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ռազմավարական անվտանգության ապահովմանը, ինչպես նաեւ հայկական սփյուռքի եւ պատմական հայրենիքի հետ նրա կապերի պահպանմանը: ՀՀԿ-ի առաջարկած Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման համահայկական գործունեության հայեցակարգը կոչված է ապահովելու ազգային շահերի պաշտպանության մեր համատեղ գործունեության արդիականացումը:

Մոտ ժամանակներս ՀՀԿ-ն ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ, գիտական, փորձագիտական ընկերակցության, քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ծրագրում է Երեւանում անցկացնել Հայոց ցեղասպանության խնդրին նվիրված միջազգային գիտական կոնֆերանս, որտեղ հանգամանորեն կքննարկվեն մեր կազմակերպության հայեցակարգային առաջարկությունները:

***ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

# Մշակույթի ապագաղութացումը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

**Գլոբալիզացիան անմիջական հետեւանքն է ակնթարթային շփումների, վայրկյանական հաղորդակցությունների: Կիբեռտարածության հայտնությունը, իր բոլոր դրական հատկություններով, ունի միատարրություն ստեղծելու հակվածությունը, որն ազգություններին եւ անհատներին մղում է կորցնելու իրենց բնավորությունն ու անհատականությանը բնորոշ առանձնահատկությունները:**

**Գլոբալիզացիայի արդյունքում Սեուլում (Հարավային Կորեա) եւ աշխարհի այլ վայրերում, ասենք՝ Արգենտինայում, երիտասարդները միեւնույն ջինսերն են հագնում, միեւնույն բաղադրիչներով Մակդոնալդսի սենդվիչներ են ուտում եւ միեւնույն ռեպ երգերն են երգում: Իրոք տպավորիչ է տեսնել, թե ինչպես է աշխարհը վերածվում «գլոբալ ավանի»: Բայց ճաշակների այս միատարրությունը հնարավորություն է ընձեռում բազմազգ կորպորացիաներին ընդլայնելու իրենց ապրանքների շուկաները եւ գրպանելու անընդհատ աճող եկամուտներ:**

**Չնայած Արեւելյան Եվրոպայի շատ երկրներ բերկրանքով են ողջունում գլոբալիզացիայի արդյունքները, հին Եվրոպայի երկրները, հատկապես Ֆրանսիան, մտահոգված են իրենց ինքնությունը կորցնելու սպառնալիքով: Ֆրանսիան արդեն բավական ժամանակ հուսահատ պայքար է մղում զանգվածային լրատվության ասպարեզում պահպանելու իր լեզվի անաղարտությունը եւ դուրս մղելու անգլերեն արտահայտություններն ու ամերիկյան մշակույթի այլ դրսեւորումները: Ազգային ինքնության պահպանության խնդիրը Ֆրանսիայում հասարակական քննարկման կարեւորագույն թեմաներից է այսօր: Վերջերս այնտեղ հրատարակված սատիրական մի վեպ, որն այդ ցավոտ թեմային է անդրադառնում, մեծ ոգեւորությամբ ընդունվեց հանրության կողմից: Հատորի վերնագիրն է «Զորավարի վերադարձը»: Հեղինակը՝ Բենուա Դյուտյորտրը ակնարկում է զորավար դը Գոլի, այսինքն՝ Ֆրանսիայի հպարտության խորհրդանիշի վերադարձը՝ դրանով իսկ պայքարելու համար գլոբալիզացիայի դեմ եւ ֆրանսիացիներին վերադարձնելու անցած-գնացած լավ օրերը:**

**Դը Գոլի ստվերը դեռեւս առկա է ֆրանսիացիների հոգեբանության ամենախոր անկյուններում: Դա հաճախ նկատելի է նաեւ Ամերիկայի տնտեսական, մշակութային եւ ռազմական գերիշխանության նկատմամբ ֆրանսիացիների տածած վրդովմունքի զգացմունքներում:**

**Հարցը միայն ամերիկյան ազդեցության դեմ վրդովմունքը չէ, այլեւ այն փաստը, որ գլոբալիզացիան նմանվում է միակողմանի ճանապարհի, որտեղ առավել ուժեղ ազգությունները կամ երկրները պարտադրում են իրենց ազդեցությունը համեմատաբար փոքր ազգությունների կամ երկրների վրա, որոնք հպարտ են իրենց մշակութային ավանդույթներով եւ յուրահատուկ արժեքներով:**

**Եթե Ֆրանսիայի նման մեծ երկիրն է անհանգստանում ազգային ինքնությունը կորցնելու վտանգից, ապա ինչքա՞ն ավելի շատ պետք է անհանգստանան փոքրիկ, տվյալ դեպքում՝ Հայաստանի նման երկրները:**

**Խորհրդային ժամանակաշրջանում ուսուցմանը շատ լուրջ ուշադրություն էր դարձվում: Բացի մարքսիզմ-լենինիզմի կեղծ ուսմունքից, որը ծիծաղելի առարկա էր հավասարապես ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների շրջանակներում, ուսանողները ստանում էին համակողմանի լուրջ կրթություն, որը կարող էր մրցել որեւէ երկրի կրթական համակարգի հետ: Անկախությունն իր հետ բերեց շփոթվածություն եւ քաոսային վիճակ երկրի կրթական համակարգին: Ձգտելով ինտեգրվել եվրոպական կառույցներին՝ Հայաստանը միացավ Բոլոնիայի պայմանագրին, որը դեռեւս իր ճշգրիտ սահմանումը չի գտել Հայաստանում եւ շարունակում է ավերածություններ գործել:**

**Բոլոնիայի պայմանագիրը, որի նպատակն է միատարր կրթական համակարգ ստեղծել բոլոր մասնակից կամ անդամ պետությունների համար, դեռեւս ամբողջությամբ չի ընկալված Հայաստանում:**

**Եվ դա դեռ «չմարսած», նոր սպառնալիք է կախվում Հայաստանի գլխին՝ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի առաջարկած օտարալեզու դպրոցներ բացելու օրինագծի տեսքով:**

**Հասարակական ընդվզում է առաջացրել այս որոշումը Հայաստանում: Երեւույթը նման է Հայաստանի կրթական համակարգում տիրող գավառականությունը գլոբալիզացիայի գերհարկադրական փաթեթով փոխարինելուն: Հայերենն առանց այն էլ մեծապես տուժել է եւ աղավաղումների ենթարկվել խանութների ցուցանակներում, զանգվածային լրատվության ասպարեզում եւ նույնիսկ մերօրյա գրականության մեջ:**

**Խորհրդարանի պատգամավորներից Անահիտ Բախշյանի համոզմամբ՝ «Ներկայումս ոչ թե օտարալեզու դպրոցների վերաբացումը, այլ հայկական դպրոցներում հայերեն լեզվի դասավանդման ցածր մակարդակն է ամենամեծ սպառնալիքը»: Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը առավել քննադատաբար է արձագանքել՝ նշելով. «Կրթության նախարարն ասում է, որ չի կարող բարձրացնել կրթության որակը եւ պետք է օտարալեզու դպրոցներ ներմուծի դրսից: Սա առնվազն զավեշտական է, եթե ոչ ողբերգական: Մենք փորձում էինք քայլ անել դեպի առաջ, սակայն սա պարզապես քայլ է դեպի անդունդ: Մասնագետներն այն եզրակացությանն են հանգել, որ երեխան նախ պետք է իր մայրենի լեզվով կրթություն ստանա եւ հետո միայն սովորի օտար լեզու»: Տարակարծությունն, անշուշտ, ընդհանրապես օտար լեզվի ուսուցման դեմ չէ, այլ հայկական պետական հանրակրթական դպրոցները օտարալեզու դպրոցներով փոխարինելու դեմ է: Հայաստանն իր նոր ձեռք բերած անկախ երկրի կարգավիճակին հարմարվելու փուլում է տակավին, եւ պատրաստի օտար մոդելների ընդօրինակումը դեռեւս ախորժելի է թվում, սակայն վերջին հաշվով դա կարող է խաթարել երկրի ազգային ինքնությունը:**

**Հարցը բոլորովին սատիրական չէ, ինչպես վերեւում նշված ֆրանսիական վեպի պարագայում էր: Դա ռեալ, լուրջ խնդիր է, որը մեր ազգային հոգեբանությանն է խորապես առնչվում: Հուսով ենք, որ քննադատություններն ու համազգային ընդվզումներն իրենց արդյունքը կտան եւ առանց մանրազնին վերլուծության օտար մշակույթներին ընդառաջ գնալու այս մոլուցքը կդադարեցվի անհապաղ: Առավել սթափ եւ լուրջ վերանայման արդյունքում մենք կկարողանանք ապագաղութացնել մեր լեզուն եւ մշակույթը:**

Դետրոյթ, ԱՄՆ
«Արմինյն միրոր սփեքթեյթրից»
թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

AZG NEW PDF.qxd 24/06/2010 21:52 Page 1



# Իսրայելը մարտահրավեր է նետում Թուրքիային

## *Պարգեւատրելով այն զինվորներին, որոնք «Մարմարա» նավում սպանել էին 9 թուրք «հումանիստների»*

Մայիսի 31-ին «Մեր ուղեգիծը Պաղեստինն է, իսկ բեռը՝ մարդասիրական օգնություն» կարգախոսով դեպի Գազա նավարկող «Ազատության նավատորմիղի» վրա հարձակված իսրայելական հատուկ ջոկատին թուրքական «Մավի Մարմարա» նավի տախտակամածում համառ դիմադրություն էին ցուցաբերել կացիններով, դանակներով եւ երկաթե ձողերով զինված հումանիստները:

Իսրայելական հատուկ ջոկատի մարտիկներին «արժանի» դիմադրություն ցույց տալու քաջագործությունն այնպես էր ոգեւորել նավի ուղեւորներից «Մարդու իրավունքների եւ ազատությունների հումանիտար օգնություն» կազմակերպության նախագահ Բյուլենթ Յըլդըրըմին, որ վերադառնալով Ստամբուլ, լրագրողների առջեւ գոռոզանալիս՝ ակամա բացահայտումներ էր արել միջադեպի մասին:

Նա, ինչպես տեղեկացրել էինք «**Ազգի**» հուլիսի 4-ի համարում, ասել էր. «Առավոտյան նամազին հանկարծ հարձակման ենթարկվեցինք: Մեր ընկերները զուտ խաղաղ դիմադրություն ցուցաբերեցին: Զինաթափել էինք իսրայելցի 10 զինծառայողի: Այնուհետեւ սկսեցին կրակոցներ տեղալ մեր վրա: Հանձնվող ընկերներին սպանեցին: Չէինք հանձնվի, եթե մեր մեջ կանայք չլինեին: Իսրայելում ինձ հարցաքննելիս հարցրեցին. «Դու մեր զինվորների վրա երկաթե ձողով եւ կացնով չե՞ս հարձակվել»: Ես պատասխանեցի, որ պաշտպանվում էի»:

Այլ կերպ, հատուկ ջոկատին դիմադրելը ենթադրում է հարձակմանը պատրաստ լինել: Քանի որ նամազի ժամանակ միանգամայն ավելորդ է կացիններով, դանակներով, երկաթե ձողերով զինվելը, ուստի նավի ուղեւորները նախապես պատրաստվել էին դիմագրավելու հարձակմանը: Դա ամենայն հավանականությամբ հանկարծակիի է բերել իսրայելական ջոկատին, նավի հումանիստ ուղեւորները դաժան ծեծի ենթարկելով զինաթափել են 10 զինծառայողների, որից հետո միայն ջոկատը զենք է գործադրել դիմադրողների վրա: Սպանվել է 9 թուրք հումանիստ: Դիմադրողները հանձնվել են, իսկ գերեվարված զինծառայողները՝ ազատվել:

«Մավի Մարմարա» նավի վրա ցուցաբերված այս դիմադրությունը հումանիստներն օգտագործեցին Իսրայելի բանակին վարկաբեկելու համար, հրապարակելով մամուլում գերեվարված իսրայելցի 10 զինծառայողի արյունլվա լուսանկարները: Թուրքիան Իսրայելի հետ առճակատման գնալու պատրաստակամությամբ դա ծառայեցրեց իսլամական եւ արաբական աշխարհում դիրքեր ամրապնդելու, իսկ Իսրայելը՝ Թուրքիայի հետ առճակատումը՝ Գազայի հատվածում ստատուս քվոն պահպանելու նպատակին:

Հակասական մոտեցումների առկայությամբ հումանիտար աղետի շեմին կանգնած Գազայի պաղեստինցի բնակչությունը ոչ թե մարդասիրական օգնություն ստացավ, այլ դարձավ քաղաքական տարբնույթ առաջադրանքների կատարման միջոց: Քանի որ դրանց հիմքում լուրջ քաղաքական հաշվարկներն էին, ուստի Թուրքիան հակաիսրայելական ելույթներով հետեւողականորեն սրեց Իսրայելի հետ հարաբերությունները: Իսրայելական կողմի բուռն հակազդեցությունը հանգեցրեց Թուրքիա-Իսրայել ճգնաժամին:

Հակազդեցության պայմաններում նախաձեռնությունը չզիջելու մղումով Թուրքիան հունիսի 16-ին պահանջեց, որ մեկ ամսվա ընթացքում Իսրայելը ներողություն խնդրի Անկարայից «Ազատության նավատորմիղի» վրա հարձակման համար, համակերպվի միջադեպի առնչությամբ միջազգային հետաքննություն անցկացնելու մտքին, փոխհատուցում վճարի եւ վերադարձնի նավատորմիղի առգրավված նավերը:

Վերջնագրի պատրանք ստեղծող թուրքական պահանջներին, ինչպես վկայում է «Զիհան» գործակալությունը, Իսրայելը պատասխանել է հունիսի 21-ին՝ պարգեւատրելով «հերոսի» շքանշանով «Մավի Մարմարա» նավի վրա հարձակում գործած հատուկ ջոկատի այն մարտիկներին, որոնք 9 թուրքի էին սպանել: Պարգեւատրումը տեղի է ունեցել հանդիսավոր արարողությամբ, «հերոսի» շքանշանները զինվորների կրծքին անձամբ ամրացրել է իսրայելական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Գաբի Աշկենազին: Արարողությանը ներկա են եղել նաեւ բարձրաստիճան զինծառայողներ:

Սա յուրատեսակ մարտահրավեր է Թուրքիային, ինչպես նաեւ պատասխան թուրքական կառավարության հակաիսրայելական ելույթներին: Չարձագանքելու դեպքում թուրքական հոխորտանքները կվերածվեն բլեֆի, թուրք-իսրայելական առճակատման նախաձեռնությունն ամբողջովին կանցնի Իսրայելին, իսլամականի հետ նաեւ արաբական աշխարհը կիմանա, որ սաստելու պատրանքով Թուրքիան ընդամենը ընկրկում է Իսրայելի առջեւ, իսկ դա լուրջ վնաս կհասցնի Թուրքիայի հեղինակությանը: Այսպիսով ի չիք կդառնան վերջինի տարածաշրջանի գերտերության հավակնությունները ու տարածաշրջանում առաջնորդի դեր ստանձնելու ջանքերը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Ռուսաստանը եւ ԵՄ-ը հերոինի գլխավոր սպառողներն են

ՄԱԿ-ի թմրադեղերի եւ հանցավորության վարչության 2010 թ. զեկուցագրի տվյալները վկայում են, որ թմրամաֆիան սպառողներին առաջարկում է նոր թմրանյութեր եւ բացում նոր շուկաներ:

Աֆղանստանում վերջին մեկ տարում կրճատվել է ափիոնի արտադրությունը, իսկ Լատինական Ամերիկայում՝ կոկաինի արտադրությունը: Փորձագետների գնահատումների համաձայն, 2009-ին հերոինի համաշխարհային արտադրությունը նվազել է 13 տոկոսով, հաղորդում է BBC-ն:

Աֆղանական հերոինի եւ ափիոնի իրացման խոշորագույն շուկաներն են մնում Եվրոմիությունը եւ Ռուսաստանը՝ միասին սպառելով աշխարհում արտադրվող հերոինի գրեթե կեսը:

Եվրոմիությունում սպառվում է 85-90 տոննա հերոին: Այստեղ առաջատարներն են Մեծ Բրիտանիան (մոտ 19 տոննա), Իտալիան (18 տոննա), Ֆրանսիան (10 տոննա), Գերմանիան (7 տոննա):

Ռուսաստանը հերոինի սպառման գծով ռեկորդակիր երկիր է: Ամեն տարի այսպես կոչված «Հյուսիսային ճանապարհով» Աֆղանստանից Ռուսաստան է մտնում մոտ 70 տոննա թմրադեղ: ՌԴ-ում թմրամոլների հավանական թիվը 1,6-1,8 մլն է: Նրանց 37 տոկոսը վարակված է իմունային անբավարարության վիրուսով:

Աֆղանստանից թմրանյութերը Ռուսաստան են հասցվում Տաջիկստանով, Ուզբեկստանով, Թուրքմենստանով: Հիմնական հոսքը Տաջիկստանից ղրղզական Օշ քաղաքով անցնում է Ղազախստան եւ ապա հասնում Ռուսաստան:

Փոխադրումներն իրականացվում են մասնավոր կամ բեռնատար ավտոմեքենաներով, որպես կանոն՝ փոքր քանակություններով:

ՄԱԿ-ի զեկուցագրում նաեւ ասվում է, որ վերջին տարիներին ԱՄՆ-ում զգալիորեն նվազել է կոկաինի սպառումը, թեեւ այն էժանացել է 1990-ականների համեմատությամբ: Մինչդեռ Եվրոմիությունում կոկաինամոլների թիվն աճում է. 1998 թ. եղել է 2 միլիոն, 2008-ին՝ 4,1 միլիոն կոկաինամոլ:

Պահանջարկի փոփոխությունը հանգեցրել է մաքսանենգ մատակարարման երթուղիների փոփոխության: Լատինական Ամերիկայից դեպի Եվրոպա կոկաինն այժմ տեղափոխվում է Արեւմտյան Աֆրիկայի երկրներով, խորացնելով տարածաշրջանի անկայունությունը:

Ամենատարածված անօրինական թմրանյութը մնում է մարիխուանան: Այն աճեցնում են գրեթե բոլոր երկրներում: Ծխողների թիվը մոտ 190 միլիոն է, թեեւ տվյալ դեպքում անհնար է նրանց բոլորին միանշանակ համարել թմրամոլներ:

Բայց նույնիսկ մարիխուանան աստիճանաբար դիրքերը զիջում է սինթետիկ թմրանյութերին, որոնց արտադրությունն էժան է նստում հանցագործների վրա:

Որոշ հաշվարկների համաձայն, ամֆետամիններ օգտագործող մարդկանց թիվն արդեն հասնում է 40 միլիոնի, եւ սպասվում է, որ թմրամոլության այդ տեսակը շուտով ափիոնային թմրադեղերից եւ կոկաինից ավելի լայն տարածում կգտնի:

# Գերմանիան, Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան բանկային տուրք կսահմանեն

Գերմանիան, Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան որոշել են բանկային տուրք սահմանել, որպեսզի հաղթահարեն ֆինանսական ճգնաժամը:

Երեք երկրների համատեղ հայտարարության մեջ ասվում է, որ ֆինանսական կառույցները պարտավոր են «արդարացի եւ նշանակալի ավանդ» ներդնել ի հատուցումն այն միջոցների, որոնք կառավարությունները ծախսել են ընդհանուր տնտեսական ճգնաժամի ընթացքում բանկերը փրկելու նպատակով:

BFM.ru կայքէջը հաղորդում է, որ Մեծ Բրիտանիայի աջ կենտրոնամետ նոր կառավարությունն արդեն որոշել է մտցնել բանկային հարկ եւ բարձրացնել ԱԱՀ տոկոսադրույքը:

Գերմանիան մտադիր է ընթացիկ ամռանը պատրաստել բանկային հարկի օրինագիծ, իսկ Ֆրանսիան իր որոշումը կիրապարակի խորհրդարանում 2011-ի բյուջեի քննարկման ժամանակ, այսինքն՝ առաջիկա աշնանը, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

«Մեծ քսանյակում» տվյալ հարցի առթիվ միասնական կարծիք չկա: ԱՄՆ-ը պաշտպանում է Եվրոպայի դիրքորոշումը, մինչդեռ ճգնաժամից չտուժած Կանադան եւ Ավստրալիան դեմ են եվրոպացիների նախաձեռնությանը: Աստիճեյթեդ պրես գործակալության տվյալներով, Կանադայում հունիսի 26-ին բացվող «Մեծ քսանյակի» գագաթաժողովում բանկային գործունեության ընդհանուր հարկ մտցնելու դեմ հանդես կգա նաեւ Հնդկաստանը:

Քաղաքական գործիչներից ոմանք երկյուղ ունեն, որ մի քանի երկրում միակողմանիորեն բանկային հարկ մտցնելը կարող է անմրցունակ դարձնել եվրոպական բանկերը. գործառնությունները թերեւս տեղափոխվեն նման հարկերից զերծ ուրիշ տարածաշրջաններ:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՄՐԱԳԻՐ

# Իրանն ունի 17 կգ 20 տոկոսանոց ուրան



Իրանցի միջուկագործները հայտարարել են, որ իրենց հաջողվել է մինչեւ 20 տոկոս հարստացնել 17 կգ ուրան: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհին ասել է, որ իր գերատեսչությունը կարող է ամեն ամիս արտադրել 5 կգ 20 տոկոսանոց ուրան: «Բայց մենք չենք շտապում», ընդգծել է Սալեհին:

Նրա խոսքերով, իմաստ չունի արտադրել ավելի շատ միջուկային վառելիք, քան անհրաժեշտ է տվյալ պահին: «Մենք մտադիր չենք մեր ուրանի բոլոր պաշարները հարստացնել մինչեւ 20 տոկոս», ասել է Սալիհին: Նա պատմել է, որ Թեհրանում ուռուցքային հիվանդությունների բուժման նպատակով օգտագործվող ռեակտորը ծախսում է ամսական 1,5 կգ միջուկային վառելիք:

Լոնդոնի ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի փորձագետ Մարկ Ֆիցպատրիկի խոսքերով, ռումբ արտադրելու համար Իրանը պետք է ունենա 200 կգ 20 տոկոսանոց ուրան՝ դրա հետագա հարստացման պայմանով:

Հունիսի 9-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց հակաիրանական պատժամիջոցների նոր փաթեթ, որով մասնավորապես երկարաձգվում է զինավաճառքի մասնակի արգելքը: Ի պատասխան՝ Իրանը հայտարարեց, որ չի հրաժարվելու սեփական միջուկային ծրագրից: Հունիսի 16-ին Թեհրանը հայտարարեց, որ սկսում է հետազոտական նպատակների համար նախատեսված միջուկային նոր ռեակտորի շինարարությունը:

Հունիսի 21-ին Իրանն արգելեց ՄԱԳԱՏԷ-ի երկու տեսուչների մուտքը իրանական տարածք, քանի որ նրանք հրապարակել էին խորհրդապահական տվյալներ, ինչպես նաեւ սխալ հաշվետվություններ էին ներկայացրել տեսչական ստուգումների արդյունքների վերաբերյալ:

# Ավստրալիայի առաջին կին վարչապետը

Հունիսի 24-ին Ավստրալիայում առաջին անգամ ընտրվել է կին վարչապետ: Դա կառավարող Լեյբորիստական կուսակցության ղեկավար Ջուլիա Գիլլարդն է, որը կուսակցապետի պաշտոնում դարձել է Քեւին Ռադի իրավահաջորդը:



Խորհրդարանի 112 լեյբորիստ պատգամավորների քվեարկության ելքը կանխորոշված էր: Ռադը ներկուսակցական ընտրություններում հաղթելու հնարավորություն չուներ, ուստի չէր առաջադրել իր թեկնածությունը: Քեւին Ռադը լեյբորիստներին գլխավորել էր 2006-ից, իսկ 2007-ի ընտրություններում կուսակցության հաղթանակից հետո զբաղեցրել էր վարչապետի պաշտոնը:

Ջուլիա Գիլլարդը հունիսի 24-ին երդմնակալության արարողությունից հետո պաշտոնապես դարձել է Ավստրալիայի վարչապետը:

Ջուլիա Էյլին Գիլլարդը ծնվել է 1961 թ. սեպտեմբերի 29-ին Ուելսում (Մեծ Բրիտանիա): Ֆրանսպրեսը նշում է, որ ընտանիքը Ավստրալիա է տեղափոխվել 1966-ին: Գիլլարդը լեյբորիստ պատգամավոր է 1998-ից: 2006-ի դեկտեմբերին նա դարձել է Քեւին Ռադի տեղակալը: 2007-ի դեկտեմբերից զբաղեցրել է փոխվարչապետի պաշտոնը: Գիլլարդը ամուսնացած չէ եւ զավակներ չունի:

# Երկրաշարժ Տորոնտոյում «Մեծ քսանյակի» հանդիպման նախօրեին

Երեք 5,5 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Կանադայի մի շարք քաղաքներում, մասնավորապես Տորոնտոյում, որտեղ հունիսի 26-27-ը անցկացվելու է «Մեծ քսանյակի» գագաթաժողովը: Կանադական CBS հեռուստաընկերության տվյալներով, ստորգետնյա ցնցումները տեւել են 5-10 վայրկյան եւ զգացվել են նաեւ Մոնրեալում եւ Օտտավայում:

Երկրաշարժի էպիկենտրոնը եղել է 19,2 կմ խորության մեջ, Օտտավայից 61 կմ հեռու: Տորոնտոյի մի շարք բարձրահարկ շենքերի բնակիչներ տարհանվել են: Տուժածների վերաբերյալ տեղեկություններ չկան:

Առաջին օրերին Կանադայում անցկացվելու է միանգամից երկու միջազգային գագաթաժողով: «Մեծ ութնյակի» հանդիպումը տեղի կունենա հունիսի 25-26-ը Հանտսվիլ քաղաքում (Տորոնտոյից 215 կմ հյուսիս): Երկրորդը «Մեծ քսանյակի» հանդիպումն է Տորոնտոյում, որի օրերն արդեն նշեցինք: Երկու գագաթաժողովների անվտանգության ապահովման նպատակով Կանադան խոստացել է ծախսել գրեթե 1 մլրդ դոլար:

AZG NEW PDF.qxd 24/06/2010 21:51 Page 1



# Խորհրդահայ մշակույթը ուսումնասիրության թեմա

Յուրաքանչյուր ժողովրդի քաղաքակրթության աստիճանը որոշվում եւ ամրագրվում է հատկապես նրա մշակույթի զարգացման ընթացքով եւ մակարդակով: Առանց մշակույթի անհնար է պատկերացնել որեւէ ժողովրդի տեղն ու դերը քաղաքակիրթ ազգերի ընտանիքում:

Հայությունը երկրագնդի այն ժողովուրդներից է, որի մշակույթի հնությունը չափվում է հազարամյակներով: Այդ մշակույթի վերջին՝ խորհրդահայ շրջանի պատմությունը առանձին գրքով ընթերցողին է ներկայացնում մշակույթի բնագավառում բազմամյա վաստակի տեր մտավորական, պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության նախագահի **Ռուբեն Միրզախանյանը**:

Նրա «**Խորհրդահայ մշակույթը 1956-1990 թթ.**» խորագրով աշխատությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը: Գրքի խմբագիրն է պատմագիտության դոկտոր **Լավրենտի Բարսեղյանը**: Վերջինս ներածականում նշում է այն առավելություններն ու ձեռքբերումները, որոնք հատուկ են սույն աշխատությանը:




Աշխատությունը բաղկացած է հինգ գլուխներից:

Առաջին գլխում («Մշակութային կյանքի զարգացման սոցիալ-քաղաքական նախապայմանները 1956-1966 թթ.») հեղինակը վերլուծական մեթոդներով դիտարկում է այն պատմական իրավիճակն ու առանձնահատկությունները, որ ստեղծվել էին ԽՍՀՄ-ում 1956 թ. տեղի ունեցած ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո: Այդ ֆոնի վրա տրված է վերոնշյալ իրադարձության՝ Խորհրդային Հայաստանում թողած արձագանքների ճշգրիտ պատկերը:

Նշվում է, որ ՀԿԿ կենտկոմը նույնպես փորձում է ծավալել գաղափարախոսական նոր գործունեություն, որը պետք է արտահայտեր ներքաղաքական նոր միտումները:

Սույնը վերաբերում է նաեւ մշակույթի ոլորտին:

Սակայն, հին իներցիան իրեն զգացնել է տալիս եւ միջոցառումների ամբողջ ծրագիրը կառուցված էր կուսակցության նախկին որոշումների ոգով: Մասնավորապես, պլանավորման տարածումը մշակույթի ընդհանուր բնագավառի վրա անտրամաբանական էր, որն, անշուշտ, ենթադրում էր պարտադրանքներ, որոնց արդյունքում էլ կաշկանդվում էր ազատ, ստեղծագործող միտքը:

Աշխատության հեղինակը կոնկրետ փաստերով անդրադառնում է հանրապետության մշակութային կյանքի տարբեր ոլորտներին՝ այդ թվում գիտության եւ կրթության զարգացման առանձնահատկություններին: Այս առումով հետաքրքիր դիտարկումներ են կատարված, որով կոնկրետացվում է գիտակրթական ոլորտի զարգացման դինամիկան:

Ըստ վերոնշյալի, 1960 թ. Հայաստանում կար 66 գիտահետազոտական հիմնարկ, որտեղ աշխատում էին ավելի քան 3 հազար գիտաշխատողներ, այդ թվում՝ գիտությունների 153 դոկտորներ եւ 1350 թեկնածու: Թիվ 1 աղյուսակում ներկայացված է հանրապետությունում գործող հանրակրթական դպրոցների, ուսումնարանների, տեխնիկումների ու բուհերի քանակը (էջ 46): Ըստ այդմ, 1965-66 ուստարում Խորհրդային Հայաստանում գործել են 1574 հանրակրթական դպրոցներ (1950-51 ուստարում՝ 1405 դպրոց) 36 ուսումնարաններ, 45 տեխնիկումներ եւ 11 բուհեր: Տեղին ու ճշմարտացի է հեղինակի այն եզրահանգումը, որ անկախ կրթօջախներում իրականացվող կոմունիստական գաղափարական պարտադրանքից, ժողովրդական կրթության ասպարեզում ձեռք բերված նվաճումներն ակնառու էին, եւ Հայաստանում նախկինում երբեք նման բարձր ցուցանիշներ չէին արձանագրվել (էջ 47):

Նույնը վերաբերում է գիտության ոլորտին:

Աշխատության հետաքրքիր բաժիններից մեկը վերաբերվում է խորհրդահայ գեղարվեստական գրականության ու թատերգության զարգացման ուղիների պատմաքննական վերլուծությանը, որում բավականաչափ ուսանելի դիտարկումներ ու եզրահանգումներ են արված: Բազմաթիվ փաստերի եւ օրինակների վկայակոչումով աներկբա է դառնում այն ճշմարտությունը, որ Խորհրդային Հայաստանում այդ ժամանակաշրջանում գրականության եւ արվեստի նկատմամբ մեծապես զգացվում էր պետական հովանավորչությունը:

Բացի պետական հովանավորությունից նկատելի էր նաեւ ազգային մոտեցման դրսեւորումը: Բերված օրինակներից առավել ցայտունը վերաբերում է տաղանդաշատ բանաստեղծ Պ. Սեւակին, որն արժանացավ հանրապետության գրական բարձրագույն պարգեւին՝ պետական մրցանակի 1967 թվականին, երբ ԽՍՀՄ-ում լայնորեն նշվում էր Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը, եւ բոլոր կարգի մրցանակները, որպես կանոն, տրվում էին այդ թեմայով ստեղծագործություններին:

Իրավացի է ուսումնասիրության հեղինակը, երբ նշում է, որ Հայաստանում փաստորեն մոտեցումն այլ էր:

Հիմնավորված է այն պնդումը, որ սույն շրջանում խորհրդահայ պոեզիային բնորոշ էր դառնում քարացած եւ կաղապարված մոտեցումներից, սխոլաստիկ մտածողությունից ազատվելու ձգտումը: Հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա հերոսական ու ողբերգական էջերը շարունակ հանդիսանում էին բազմաթիվ ստեղծագործողների բանաստեղծական աշխարհի հիմնական առանցքը:

«Արվեստը Խորհրդային Հայաստանում» ենթագլխում հեղինակը մանրամասն անդրադառնում է նույն ժամանակահատվածում խորհրդահայ թատրոնի եւ կինոյի, երաժշտական արվեստի, կերպարվեստի ու ճարտարապետության զարգացման հիմնական ուղղություններին: Հետաքրքրական են այն փաստերը, որոնք վերաբերում են հայոց Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ ծրագրված հուշահամալիրի կառուցման նախագծերի ընտրությանը: Պարզվում է, որ այստեղ մեծ դեր է խաղացել ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահի Անտոն Քոչինյանի կարծիքը: Մրցույթի ներկայացված նախագծերից նա միանշանակորեն հավանություն է տալիս ճարտարապետներ Արթուր Թարխանյանի ու Աշոտ Քալաշյանի նախագծին, գտնելով, որ նրանում «Երկու բաղադրիչները՝ սուգն ու վերածնունդը մատուցված են ճարտարապետական պարզ ու մատչելի լեզվով: Մեկը՝ խաչքարաձեւ, խոնարհված կոթողներով, մյուսը՝ շեշտակի վերասլաց սրածայրով» (էջ 123): Հենց Ա. Քոչինյանն էլ նպաստում է ճիշտ ընտրություն կատարելուն:

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է հայրենիք-սփյուռք մշակութային կապերի սկզբնավորման եւ զարգացման ընթացքի գիտական մշակմանն ու լուսաբանմանը: Նշվում է, որ հայրենիք-սփյուռք մշակութային մերձեցմանը նպաստող գործոնները երկուսն էին՝ քաղաքական (հատկապես խրուշչովյան «ձնհալի» առկայությունը), որն աստիճանաբար, արդեն 1960-ական թթ. կեսերից ինքն իրեն սպառեց, եւ մշակութային, որը շարունակվեց մինչեւ Խորհրդային Միության փլուզումը:

Վերոնշյալ կապերի օրեցօր ընդլայնումը ծնեց Սփյուռքի հետ աշխատանքները կոորդինացնող մարմնի ձեւավորման գաղափարը, որի հիմնադիր կոնֆերանսը տեղի ունեցավ 1964 թ. հունիսի 25-ին, Երեւանում: Կազմակերպության նախաձեռնողներն էին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, անվանի մտավորականներ Մարտիրոս Սարյանը, Վարդգես Համազասպյանը, Ստեփան Զորյանը, Նաիրի Զարյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Քոչարը եւ ուրիշներ:

Անդրանիկ նիստում Մ. Սարյանի առաջարկությամբ նորաստեղծ մարմինը վերանվանվում է «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» (էջ 153):

Հստակ մատնանշվում է այն միտքը, որ Մեծ Եղեռնի 50-ամյակի պետականորեն ոգեկոչումը նոր կարեւոր ազդակ էր հայրենիք-սփյուռք մերձեցման համար: Իսկ Խորհրդային Հայաստանի այդ ժամանակվա ղեկավար Յա. Զարոբյանը էլ ավելի նպաստեց վերոնշյալ մերձեցմանը՝ իր հետագա գործունեությամբ:

Աշխատության հետաքրքրական, ուշագրավ մասերից է չորրորդ գլուխը՝ «Մշակութային կյանքը Հայաստանում 1966-1990 թթ.» խորագրով: Այս ժամանակաշրջանը, ըստ մշակույթի պատմության հետազոտողի, լի էր մշակութային կյանքի զարգացման վերընթացն ապահովող իրադարձություններով ու իրողություններով, որն առկա էր գրեթե բոլոր ոլորտներում: Լուրջ նվաճումներ էին գրանցվում ժողովրդական կրթության, գիտության, թատրոնի եւ կինոյի բնագավառներում:

Դա, անշուշտ, այդպես էր, քանզի մշակութային կյանքը Խորհրդային Հայաստանում պետական հովանավորության առարկա էր: Վիթխարի աշխատանք էր իրականացվում նաեւ երկրի գյուղական շրջաններում:

Այս առումով հեղինակի եւս մեկ իրավացի եզրահանգումն հետեւյալն է. «Ժողովրդական կրթության զարգացումը համարվում էր համապետական գործ, եւ երբեք հայ գյուղը այնքան հարուստ չէր եղել կրթական հիմնարկներով, մշակութային օջախներով, ակումբներով, գրադարաններով, կուլտուրայի տներով» (էջ 164-165):

Այս ամենն, այո, անվիճարկելի ճշմարտություն է, եւ սույն աշխատության էջերում այն տեսանելի է նաեւ կոնկրետ թվերով ու փաստերով, համապատասխան աղյուսակներով: Հպարտություն եւ հպարտանալու շատ բան կար այդ ժամանակներում եւ այդ ոգով ու ոճով էր ներծծված Խ. Հայաստանի թիվ 1 ղեկավարի՝ Կ. Դեմիրճյանի 1981 թվականին ՀԿԿ կենտրոնական կոմիտեի եւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հանդիսավոր նիստում ունեցած հաշվետու ելույթը. «Մեր մեծ նվաճումն է այն, որ այժմ հանրապետությունը ծածկված է թատրոնների, համերգասրահների, կինոթատրոնների, գրադարանների, թանգարանների, երաժշտական, գեղարվեստական, պարարվեստի դպրոցների եւ ուսումնարանների խիտ ցանցով» (էջ256):

Սակայն, այնուամենայնիվ, վերոնշյալ նվաճումներին զուգահեռ, հասարակության խորքերում հասունանում էին լուրջ ճգնաժամային երեւույթներ, որոնց սկզբնական շրջանում տրվեց «լճացում» անվանումը:

Լճացում, որը շատ արագ վերածվեց համակարգային ճգնաժամի: Սույն հարցերին հեղինակն անդրադառնում է «Խորհրդահայ մշակույթը հասարակական-քաղաքական նոր պայմաններում՝ 1985-1990 թթ.» ենթաբաժնում:

Ամփոփելով, նշենք, որ Ռ. Միրզախանյանի գրախոսվող սույն աշխատությունը եւս մի կարեւոր ներդրում է հայ պատմագիտության մեջ առհասարակ եւ Հայաստանում մշակութային կյանքի ուսումնասիրության ասպարեզում մասնավորապես:

Աշխատությունն ունի ռուսերեն եւ անգլերեն լեզուներով ծավալուն ամփոփումներ, ինչպես նաեւ զետեղված են վերոնշյալ դարաշրջանի Հայաստանի մշակութային կյանքը ներկայացնող հազվագյուտ լուսանկարներ:

ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու



# Գրողների համահայկական համաժողովը կբացվի հունիսի 28-ին՝ Ծաղկաձորում

**ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ ՀԳ միության նախագահի Լեւոն Անանյանը մամուլին տեղեկացրին, որ հունիսի 28-ից հուլիսի 2-ը «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի շրջանակներում Հայաստանում կգումարվի գրողների «Հայ գրականությունը՝ հայոց միջնաբերդ» խորագիրը կրող համահայկական 5-րդ համաժողովը: Նախարար Հրանուշ Հակոբյանը նշեց, որ մեկ տարի առաջ սփյուռքի նախարարությունն ու ՀԳ միությունը ստորագրեցին համագործակցության հուշագիր, որի 18 կետերից 14-ը կատարվել է ու տվել հրաշալի արդյունք: Դրանց թվում են՝ սփյուռքահայ գրողների մեծարման շարք ՀՀ-ում եւ սփյուռքում, համատեղ կոնֆերանսների կազմակերպում, Գրքի օր, Թումանյանական շաբաթ, «Մայրենի լեզվի» տարի, սփյուռքահայ գրողների գրքերի տպագրություն ու շնորհանդեսների կազմակերպումը եւ այլն:**

**«Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը մեկնարկեց ապրիլին՝ համահայկական ցուցահանդեսով Երեւանի քաղաքապետարանի սրահում, նշեց նախարարն ու ավելացրեց, որ փառատոնը կշարունակվի մինչեւ նոյեմբեր: Տկն Հակոբյանը տեղեկացրեց նաեւ, որ նախորդ տարվա համեմատ ակտիվություն է նկատվում՝ գրողների համաժողովին մասնակցելու, եւ մասնակիցների թիվն էլ կրկնապատկվել է: Նախարարը նշեց նաեւ, որ ակտիվացել է երիտասարդ գրողների մասնակցությունը, շնորհիվ նրանց նկատմամբ Գրողների միության վերաբերմունքի ու հատուկ տարվող քաղաքականության:**



**Համաժողովի ընթացքում կլինեն սփյուռքահայ գրողների 5-6 գրքի շնորհանդեսներ, քննարկումներ ու նաեւ կտոնվի Հովհաննես Շիրազի 95-ամյակը (Գյումրի), Վահան Տերյանի 125-ամյակը եւ այլն: Հայ գրողները կայցելեն զորամասեր, կհանդիպեն զինվորների հետ: Արդեն ստեղծվել է մի հանձնախումբ, նշեց նախարարը, որի ընտրությամբ տպագրվել է «Արդի քնարերգությունը Հայաստան-սփյուռք» երկհատոր ժողովածուն, որը մեծագույն եւ լավագույն կամուրջն է սփյուռք-հայրենիք համագործակցության: Կլինեն նաեւ ԼՂՀ-ի գրողների հետ հանդիպումներ ու այցելություն Արցախ:**

**Նախարարն ավելացրեց, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի հետ առաջիկայում կկազմակերպվի երկու համաժողով՝ «Համահայկական դասագրքերի ստեղծում» եւ «Արեւմտահայերենի ուսուցման վիճակը սփյուռքում» թեմաներով:**

**Պրն Անանյանը, ներկայացնելով համաժողովի կազմակերպման նպատակներն ու խնդիրները, նշեց, որ շուրջ 20 երկրներից գրողներ են ժամանելու՝ համաժողովին մասնակցելու: «Նախարարության հետ համագործակցության ընթացքում», նշեց պրն Անանյանը, «մենք կարողացել ենք ստեղծել համահայկական գրական դաշտ, որի շնորհիվ սփյուռքի գրողներն իրենց գործերը տպագրում են Հայաստանում, ՀԲԸՄ-ի կողմից բացված տպարանում: Հաջողված քայլ է նաեւ մրցանակային դաշտում տեղավորել ոչ միայն հայաստանցի, այլեւ Սփյուռքի գրողներին: Հատուկ ուշադրություն է դարձվելու երիտասարդ գրողներին, որպեսզի մենք կարողանանք ժառանգության կապը պահել»: Համաժողովն իր օրհնությամբ կողջունի Ամենայն հայոց կաթողիկոսը: Հաջորդ օտարագիր հայ գրողների համաժողովը կգումարվի 2011-ին Մոսկվայում՝ Ռուսաստանի հայերի միության եւ Հայկական համաշխարհային կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանի ֆինանսավորմամբ:**

**Համաժողովի ընթացքում կհանձնվեն 2009 թ. գրական մրցանակներն ու սփյուռքի նախարարության մրցանակներն ու պատվոգրերը՝ Հայաստան-Սփյուռք կապերն ամրապնդելու համար: «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն Թամարա Պողոսյանը տեղեկացրեց, որ արդեն ստացվել են մասնակցության 1000 հայտ, եւ այս տարի աշխարհագրությունը ընդլայնվել է: Փառատոնի մշակութային հատվածը կներկայացվի հավուր պատշաճի:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱԶԳ **Մարզական**

# Իտալիան խայտառակվեց

*Ավստրալիան Գանայի առջեւ կանաչ լույս վառեց*

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունում հայտնի դարձան 1/8 եզրափակիչի եւ 2 զույգեր՝ ԱՄՆ-Գանա, Գերմանիա-Անգլիա: Նախնական փուլում իրենց մրցավեճն ավարտեցին նաեւ D խմբում ընդգրկված հավաքականները: Խմբում իրավիճակն այնպիսին էր, որ բոլոր հավաքականներն էլ ուղեգիր նվաճելու հնարավորություն էին պահպանում:

Առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում խմբի առաջատար Գանայի հավաքականի մրցավեճը գերմանացիների հետ: Հաջորդ փուլ մտնելու համար գերմանացիներին հաղթանակ էր անհրաժեշտ, որպեսզի կախում չունենային զուգահեռ ընթացող Սերբիա-Ավստրալիա հանդիպման արդյունքից: Գերմանացիները կատարեցին իրենց առջեւ դրված խնդիրը՝ 1-0 հաշվով հաղթելով մրցակցին շնորհիվ Մեզուտ Օզիլի խփած միակ գոլի: Իսկ ահա Գանայի հավաքականին ուղեգիր նվաճել օգնեցին ավստրալացի ֆուտբոլիստները, որոնք մեծ անակնկալ մատուցեցին՝ պարտության մատնելով սերբերին (2-1): Ընդ որում՝ այնպիսի իրավիճակ էր ստեղծվել, որ Գանայի հավաքականի ֆուտբոլիստներին ձեռնտու էր 0-1 հաշվով պարտվելը, քան ոչ-ոքի արդյունքի ձգտելը, քանի որ այդ դեպքում նրանք խմբում կգրավեին 1-ին տեղը ու ստիպված կլինեին 1/8 եզրափակիչում մրցել Անգլիայի ընտրանու հետ: Թեեւ ամերիկացիների հետ մրցավեճում էլ գանացիներին հեշտ պայքար չի սպասվում:

Ներկայացնում ենք մարզիչների կարծիքները կայացած հանդիպումների մասին:

**Յոահիմ Լյով (Գերմանիա)** - Շատ լարված խաղ ստացվեց: Հարկավոր էր օգտագործել գոլային պահերը: Մենք որոշ դրվագներում անուշադիր էինք գործում մրցակցի տուգանային հրապարակում: Սակայն չպետք է մեղադրել երիտասարդ ֆուտբոլիստներին: Թիմի վրա ճնշումը մեծ էր, քանի որ մեզանից միայն հաղթանակ էին պահանջում: Արդյունքում մեզ հաջողվեց հաղթել: Ինչ վերաբերում է Անգլիայի հավաքականի հետ առաջիկա հանդիպմանը, ապա արդեն այժմ այդ խաղի շուրջ մեծ իրարանցում է: Մենք եւս հիմնախնդիրներ ունենք: Բոատենգը մեջքի, Շվայնշտայգերը՝ ոտքի վնասվածքներ ունեն: Եթե վերջինս չկարողանա խաղալ, ապա դա մեզ համար լուրջ կորուստ կլինի:

**Միլովան Ռաեւաց (Գանա)** - Հուսով ենք, որ հարավաֆրիկացիների մեծամասնությունը կշարունակի աջակցել մեզ: Այսօր մի շարք նպաստավոր պահեր ստեղծեցինք, սակայն մարզական բախտը երես էր թեքել մեզանից: Գուցե մեզ կենտրոնացումը չբավարարեց: Հուսով եմ, որ կհաջողվի գոլ խփել ԱՄՆ-ի հետ առաջիկա խաղում: Այնպես որ հարկավոր է շուտ մոռանալ գերմանացիների հետ հանդիպումը:

**Պիմ Վերբեկ (Ավստրալիա)** - Հիասթափված եմ, քանի որ հաջորդ փուլ չմտանք: Կարծում էի, 4 միավորը բավարար կլինի: Ցավոք, գերմանացիներից բաց թողած 3 գնդակները ճակատագրական եղան մեզ համար:

**Ռադոմիր Անտիչ (Սերբիա)** - Մենք շատ լավ էինք խաղում, դրսեւորեցինք բոլոր ունակությունները: Ֆուտբոլիստներին հանդիմանելու ոչինչ չունեմ: Իսկ ահա մրցավարներն ամեն ինչ արեցին, որպեսզի չհաղթենք: Միլոշ Կրասիչը գոլ խփելիս բնավ էլ «խաղից դուրս» վիճակում չէր: Իսկ երբ Կեխիլը ձեռքով խաղաց, մրցավարը չցանկացավ դա նկատել ու 11 մ հարված նշանակել:

Երեկ երեկոյան հայտնի դարձան F խմբից ուղեգիր նվաճած հավաքականները: Բոլորին հուզում էր այն հարցը, թե ինչպիսի ճակատագրի կարժանանա աշխարհի գործող չեմպիոն Իտալիայի հավաքականը: Հաջորդ փուլ դուրս գալու համար իտալացիները նվազագույնը չպետք է պարտվեին Սլովակիայի հավաքականին այն հույսով, որ նորզելանդացիները կպարտվեն պարագվայցիներին:



Աշխարհի գործող չեմպիոնները պարզապես խայտառակվեցին՝ 2-3 հաշվով պարտություն կրելով ու դուրս մնալով հետագա պայքարից: Առաջնության նորեկ Սլովակիայի հավաքականից 2 անգամ իտալացիների դարպասը գրավեց Վիտեկը, մեկ անգամ էլ աչքի ընկավ Կոպունեկը: Իտալացիներից գոլերի հեղինակներ դարձան Դի Նատալեն ու Կվալյարելան: Սլովակների հետ F խմբից պայքարը կշարունակեն պարագվայցիները, որոնք գոլազուրկ ոչ-ոքիով ավարտեցին հանդիպումը նորզելանդացիների հետ:

**Մրցաշարային աղյուսակ**

**D խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Գերմանիա | 3 | 2 | 0 | 1 | 5-1 | 6 |
| 2. Գանա | 3 | 1 | 1 | 1 | 2-2 | 4 |
| 3. Ավստրալիա | 3 | 1 | 1 | 1 | 3-6 | 4 |
| 4. Սերբիա | 3 | 1 | 0 | 2 | 2-3 | 3 |

**F խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1.Պարագվայ | 3 | 1 | 2 | 0 | 3-1 | 5 |
| 2.Սլովակիա | 3 | 1 | 1 | 1 | 4-5 | 4 |
| 3.Նոր Զելանդիա | 3 | 0 | 3 | 0 | 2-2 | 3 |
| 4.Իտալիա | 3 | 0 | 2 | 1 | 4-5 | 2 |




# Հովհաննես Գոհարյանը կհամալրի «Փյունիկի» կազմը

Հուլիսին Հայաստանի ֆուտբոլային առաջատար ակումբները մեկնարկի դուրս կգան եվրոպական գավաթների մրցաշարերում: Նոր մեկնարկից առաջ թիմերի ղեկավարությունը մտահոգված է կազմն ուժեղացնելու խնդիրներով:

ՀՀ բազմակի չեմպիոն «Փյունիկը» եւս կազմի ուժեղացման հետ կապված խնդիրներ ունի: Ներկայումս «Փյունիկում» փորձաշրջան են անցնում նիգերիացի 3 ֆուտբոլիստներ: Ըստ թիմի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի, առայժմ որոշակի հստակություն կա միայն պաշտպան Ադեինյա Ադեդեջի հարցում, որի հետ երեւի պայմանագիր կկնքվի:

Նիգերիացիներից մեկը՝ Աբդուլ Քենիլսոնը մասնակցել է Հայաստանի հավաքականի հետ կայացած ընկերական խաղին ու դարձել է «Փյունիկի» միակ գոլի հեղինակը: Այդ խաղում գրանցվել է ոչ-ոքի՝ 1-1: Հավաքականի ֆուտբոլիստներից աչքի է ընկել «Բանանցի» հարձակվող Սարգիս Կարապետյանը: Այդ հանդիպումից հետո խոսելով «Փյունիկի» կազմի ուժեղացմանն ուղղված աշխատանքների մասին, Վարդան Մինասյանը տեղեկացրեց, որ շուտով թիմի կազմը կհամալրի Հայաստանի հավաքականի անդամ, Բելառուսի ԲԱՏԷ-ում հանդես եկող Հովհաննես Գոհարյանը: Ինչ խոսք, նրա ներկայությունը զգալիորեն կուժեղացնի «Փյունիկի» հարձակման գիծը, մանավանդ որ Ալբերտ Թադեւոսյանը ներկայումս ծառայում է բանակում: Բացի այդ էլ վնասվածք ունի Էդգար Մալաքյանը, որը չի կարող մասնակցել առաջնության առաջիկա 2 հանդիպումներին: Փոխարենն այդ խաղերում կփորձարկվեն նիգերիացի ֆուտբոլիստները: Ինչ վերաբերում է Գոհարյանին, ապա առայժմ դժվար է ասել, թե նա որքան ժամանակ կխաղա «Փյունիկում»:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Մեկ մեդալ արդեն նվաճված է

Ուկրաինայի Լվով քաղաքում ընթացող բռնցքամարտի ավագ տարիքի պատանեկան առաջնությունում հաջող են հանդես գալիս Հայաստանի պատվիրակները: Մեր 12 բռնցքամարտիկներից 8-ն արդեն հաղթահարել են նախնական փուլի արգելքները ու մտել են քառորդ եզրափակիչ: Նրանցից վանաձորցի ծանր քաշային Ռաֆայել Սիմոնյանը երեկ ռինգում կրկին հաղթանակ տոնեց եւ մտնելով կիսաեզրափակիչ, իր համար նվազագույնն ապահովեց բրոնզե մեդալ՝ առաջին պարգեւին արժանացնելով մեր հավաքականին: Ռինգում մեր բռնցքամարտիկների գործողությունները ղեկավարում է հավաքականի ավագ մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանը:

# Մեկնարկը տրվեց

Երեկ Ջերմուկում մեկնարկեց շախմատի կանանց Գրան պրիի 4-րդ փուլի մրցաշարը, որը միաժամանակ նվիրվում է շախմատային կոմպոզիցիաների արքա Հենրիկ Գասպարյանի ծննդյան 100-ամյակին: Մրցաշարի բացման արարողությանը ներկա էին եւ մասնակիցներին ողջույնի խոսքերով դիմեցին ՀՀ նախագահ, շախմատի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանն ու ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը:

Առաջին տուրում մեր շախմատիստուհիներին լուրջ մրցակցուհիներ էին բաժին ընկել: Լիլիթ Մկրտչյանը սեւերով խաղում էր չինացի Սյու Յուհուայի հետ, իսկ Էլինա Դանիելյանը սպիտակներով մրցում էր Մայա Չիբուրդանիձեի հետ:

Մեկնարկը հաջող էր հայ շախմատիստուհիների համար, որոնք հաղթեցին մրցակցուհիներին: Ընդհանրապես առաջին տուրը շատ արդյունավետ էր: Նանա Ձագնիձեն հաղթեց Անտոանետա Ստեֆանովային, Շեն Յանը պարտության մատնեց Հոու Յիֆանին, Բաիրա Կովանովան էլ առավելության հասավ Մարթա Ֆիեռոյի նկատմամբ: Միակ ոչ-ոքին գրանցվեց Պիա Կրամլինգ-Տատյանա Կոսինցեւա պարտիայում:

Այսօր կայանալիք 2-րդ տուրում Մկրտչյանը սպիտակներով կխաղա Մարթա Ֆիեռոյի հետ, իսկ Դանիելյանի մրցակիցը կլինի Նանա Ձագնիձեն:

# Մխիթարյանը մոտենում է առաջատարին

Ռումինիայում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը սպիտակներով հաղթեց Իրինա Տուրովային եւ վաստակելով 5,5 միավոր, ընթանում է 5-րդ հորիզոնականում:

Իր հաղթարշավն է շարունակում մրցաշարի միանձնյա առաջատար, իտալացի գրոսմայստեր Դանիել Վոկատուրոն: Նա հերթական հաղթանակը տոնեց Սարունաս Սուլսկիսի հետ մրցավեճում ու վաստակեց 6,5 միավոր: 6-ական միավորով իտալացուն հետապնդում են Մաքսիմ Տուրովը, Բորիս Շաթալբաշեւը եւ Ալեքսեյ Ֆյոդորովը: Շաթալբաշեւը հաղթեց Բյոռն Թորֆինսոնին, Ֆյոդորովը պարտության մատնեց Իսրայել Կասպիին, իսկ Տուրովն առավելության հասավ Գժեգոժ Գաեւսկու նկատմամբ: 8-րդ տուրում Մխիթարյանը սեւերով կխաղա Ալեքսանդր Ֆիեռի հետ: Վոկատուրոյի մրցակիցը կլինի Շաթալբաշեւը:

# Էլիզաբեթ Երկրորդն այցելեց Ուիմբլդոն

Ուիմբլդոնի թենիսի մրցաշարի հերթական օրը նշանավորվեց երկու իրադարձությամբ: Նախ 1977-ից հետո առաջին անգամ թենիսի մրցաշարին ներկա գտնվեց Մեծ Բրիտանիայի թագուհի Էլիզաբեթ Երկրորդը: Նա հանդիպեց ու զրուցեց Ռոջեր Ֆեդերերի, Ուիլյամս քույրերի եւ Էնդի Ռոդիկի հետ: Հետաքրքրական է, որ երբ 1977-ին թագուհին այցելել էր Ուիմբլդոն, կանանց մրցաշարում հաջողության էր հասել բրիտանացի թենիսիստուհի Վիրջինիա Վեյդը՝



դառնալով այդ մրցաշարում հաղթած առաջին բրիտանուհին:

Երկրորդ իրադարձությունը տեղի ունեցավ թենիսի կորտում: Ամերիկացի Ջոն Իսները ու ֆրանսիացի Նիկոլյա Մայուն առաջին շրջանում թենիսի պատմության մեջ ամենաերկարատեւ մրցախաղն անցկացրին: Նրանք դեռեւս երեքշաբթի օրն էին սկսել իրենց մրցախաղը: Սակայն 4-րդ խաղափուլում մութն ընկնելու պատճառով հանդիպումը հետաձգվեց: Հաջորդ օրը մրցակիցները շարունակեցին հանդիպումը: 5-րդ խաղափուլը տեւեց 7 ժամ 6 րոպե, որից հետո կրկին հարկ եղավ այն հետաձգել հաջորդ օրվան: Թենիսիստներն ընդհանուր առմամբ արդեն 10 ժամ անցկացրել էին կորտում, սակայն հաղթողը դեռ որոշված չէր:

Ուիմբլդոնում առայժմ Ռոջեր Ֆեդերերին մեծ դժվարությամբ են տրվում հաղթանակները: 2-րդ փուլում էլ հաղթելու համար շվեյցարացի թենիսիստը ստիպված էր 4 խաղափուլ անցկացնել: Սերբ թենիսիստ Իլյա Բոզոլյացը համառ դիմադրություն ցույց տվեց (6-3, 6-7, 6-4, 7-6): Պայքարը շարունակում են Առնո Կլեմանը, Ֆելիսիանո Լոպեսը, Դենիս Իստոմինը, Էնդի Ռոդիկը:

Կանանց մրցապայքարում 2-րդ փուլի արգելքը հաղթահարել են Կիմ Կլիյստերսը, Մարիա Կիրիլենկոն, Ժյուստին Էնենը, Նադեժդա Պետրովան, Վերա Զվոնարյովան, Վինուս Ուիլյամսը:

*էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Ծանուցում

ծանկագիրը

Կազմակերպության անվանումը **«Գրանդ Մարկետ» ՍՊԸ**

39325882

Փաստացի գործունեության հիմնական տեսակը Առեւտուր

Պետական ռեգիստրում գրանցման համարը 26911003686

Հարկ վճարողի հաշվառման համարը 02246322

Չափի միավորը հազ. դրամ

Գտնվելու վայրը Երեւան, Արշակունյաց 61

հեռախոսը

Փաստացի գործունեության իրականացման վայրը ՀՀ, ք. Երեւան, Արշակունյաց 61

հեռախոսը 447072

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**«Գրանդ Մարկետ» ՍՊԸ**
**2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| ԱԿՏԻՎՆԵՐ | Ծնթ. | 31.12.2009 հազար դրամ |
|---|---|---|
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | |
| Հիմնական միջոցներ | | 42 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | | 42 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | |
| Պաշարներ | | 849,147 |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | | 1,107,313 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | | 5,681 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | | 1,962,141 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | 1,962,183 |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| III. Սեփական կապիտալ | | |
| Կանոնադրական կապիտալ | | 100 |
| Կուտակված շահույթ | | 84,759 |
| Ընդամենը սեփական կապիտալ | | 84,859 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | |
| Վարկեր եւ փոխառություններ | | 456,000 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | | 456,000 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | | 1,421,324 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | | 1,421,324 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 1,962,183 |




**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Գրանդ Մարկետ» ՍՊԸ**
**2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
**հաշվեփակված ժամանակաշրջանի համար**

| | Ծնթ. | 2009 հազար դրամ |
|---|---|---|
| Հասույթ | | 1,895,780 |
| Վաճառքի ինքնարժեք | | (1,737,111) |
| Համախառն եկամուտ | | 158,669 |
| Իրացման ծախսեր | | (26,971) |
| Վարչական ծախսեր | | (25,753) |
| Գործառնական այլ եկամուտներ | | 4 |
| Գործառնական շահույթ | | 105,949 |
| Շահութահարկի գծով ծախս | | (21,190) |
| Տարվա զուտ շահույթ | | 84,759 |




**Անկախ աուդիտորական եզրակացություն 24**
**«Գրանդ Մարկետ» ՍՊԸ**

**2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

**Ներկայացվում է «Գրանդ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը**

Մեր կողմից իրականացվել է «Գրանդ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտվող ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը եւ այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք ՀՀ Կառավարության 21.04.2005թ. թիվ 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտի ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել եւ անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, եւ ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գրանդ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաեւ նույն ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները եւ դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:




ծանկագիրը

Կազմակերպության անվանումը **«Ռումավա» ՍՊԸ**

Փաստացի գործունեության հիմնական տեսակը

Ծառայությունների մատուցում

Ապրանքների իրացում

Պետական ռեգիստրում գրանցման համարը 26911002020

Հարկ վճարողի հաշվառման համարը 02224116

Չափի միավորը հազ. դրամ

Գտնվելու վայրը Երեւան, Տյուլենինի 22

հեռախոսը

Փաստացի գործունեության իրականացման վայրը ՀՀ, ք. Երեւան, Շահամիրյանների 4

հեռախոսը 443303

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**«Ռումավա» ՍՊԸ**
**2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| ԱԿՏԻՎՆԵՐ | Ծնթ. | 31.12.2009 հազար դրամ | 31.12.2008 հազար դրամ |
|---|---|---|---|
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | | 615,677 | 620,802 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | | 615,677 | 620,802 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Պաշարներ | | 2,282,466 | 688,141 |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | | 146,576 | 11,170 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | | 106,578 | 151 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | | 2,535,620 | 699,462 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | 3,151,297 | 1,320,264 |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 587,450 | 587,450 |
| Կուտակված շահույթ/(վնաս) | | 8,892 | (97,440) |
| Ընդամենը սեփական կապիտալ | | 596,342 | 490,010 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Վարկեր եւ փոխառություններ | | 362,393 | 290,318 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | | 525,841 | 525,841 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | | 888,234 | 816,159 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Ընթացիկ փոխառություններ | | - | 13,458 |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | | 1,666,721 | 637 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | | 1,666,721 | 14,095 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 3,151,297 | 1,320,264 |




**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Ռումավա» ՍՊԸ**
**2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
**հաշվեփակված տարվա համար**

| | Ծնթ. | 2009 հազար դրամ | 2008 հազար դրամ |
|---|---|---|---|
| Հասույթ | | 2,400,193 | - |
| Վաճառքի ինքնարժեք | | (2,210,500) | - |
| Համախառն եկամուտ | | 189,693 | - |
| Իրացման ծախսեր | | (35,607) | |
| Վարչական ծախսեր | | (20,678) | (10,410) |
| Գործառնական այլ եկամուտներ | | 10 | - |
| Գործառնական այլ ծախսեր | | (134) | - |
| Շահույթ մինչեւ հարկումը | | 133,284 | (10,410) |
| Շահութահարկի գծով ծախս | 14 | (26,952) | - |
| Տարվա զուտ շահույթ/(վնաս) | | 106,332 | (10,410) |




**Անկախ աուդիտորական եզրակացություն 28**
**«Ռումավա» ՍՊԸ**
**2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**
**Ներկայացվում է «Ռումավա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը**

Մեր կողմից իրականացվել է «Ռումավա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը եւ այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք ՀՀ Կառավարության 21.04.2005թ. թիվ 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտի ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել եւ անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, եւ ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ռումավա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաեւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները եւ դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:




**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

• Օրենսդրական նորություններ • Պարզաբանումներ • Խորհրդատվություն

«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

**«Շումեն» ՍՊԸ-ն** դիմել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

ք. Երեւան, Նալբանդյան 27/25, հեռ. 53-32-76

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

**«Մոլբերտ» ՍՊԸ-ն** դիմել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

ք. Երեւան, Սարյան փողոց, 29-37, հեռ. 53-86-33

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 24.06.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: